

ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՅԻ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԵՎ ՇԱՀՈՒՅԹՆԵՐԻ
ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻՆ
ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲԱԶՄԱԿՈՂՄ ԿՈՆՎԵՆՑԻԱ

Սույն կոնվենցիայի կողմերը,

ընդունելով, որ կառավարություններն էական կորպորատիվ հարկային եկամուտներ են կորցնում ագրեսիվ միջազգային հարկային պլանավորման պատճառով, ինչը հանգեցնում է շահույթներն արհեստականորեն այնպիսի վայրեր տեղափոխելուն, որտեղ դրանք ենթակա են հարկման բացառման կամ նվազեցված հարկման,

նկատի ունենալով, որ հարկման բազայի խեղաթյուրումը եւ շահույթների տեղափոխումը (այսուհետ՝ ԲԽՇՏ [BEPS]) հրատապ խնդիր է ոչ միայն առավել զարգացած արդյունաբերությամբ երկրների, այլեւ նոր ձեւավորվող տնտեսությունների եւ զարգացող երկրների համար,

ընդունելով այն բանի ապահովման կարեւորությունը, որ շահույթը հարկվի այնտեղ, որտեղ իրականացվում է շահույթը ձեւավորող հիմնական տնտեսական գործունեությունը, եւ որտեղ ստեղծվում է արժեքը,

ողջունելով ՏՀԶԿ/Մեծ քսանյակի [G20] ԲԽՇՏ ծրագրի շրջանակներում մշակված միջոցառումների փաթեթը (այսուհետ՝ ՏՀԶԿ/Մեծ քսանյակի ԲԽՇՏ փաթեթ),

նշելով, որ ՏՀԶԿ/Մեծ քսանյակի ԲԽՇՏ փաթեթը ներառել է հարկային պայմանագրին առնչվող միջոցառումներ՝ ուղղված որոշ հիբրիդային անհամապատասխան պայմանավորվածությունների հարցը կարգավորելուն, պայմանագրի չարաշահումները կանխելուն, մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելու հարցը կարգավորելու եւ վեճերի լուծումը բարելավելուն,

գիտակցելով բազմակողմ համատեքստում պայմանագրին առնչվող ԲԽՇՏ միջոցառումների արագ, համակարգված եւ հետետղական իրականացումն ապահովելու անհրաժեշտությունը,

նշելով այն բանի ապահովման անհրաժեշտությունը, որ եկամտի կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ գործող համաձայնագրերը մեկնաբանվեն որպես այն հարկերի մասով կրկնակի հարկումը բացառող, որոնց վրա տարածվում են այդ համաձայնագրերը՝ առանց հարկերը շրջանցելու կամ հարկերից խուսափելու միջոցով (այդ թվում՝ պայմանագրի առավելություններից օգտվելուն ուղղված պայմանավորվածությունների միջոցով, որոնց նպատակն է երրորդ երկրների ռեզիդենտների անուղղակի օգուտի համար այդ համաձայնագրերով նախատեսված արտոնություններ ստանալը) հարկման բացառման կամ նվազեցված հարկման հնարավորություններ ստեղծելու,

ընդունելով, որ անհրաժեշտ է արդյունավետ մեխանիզմ՝ եկամտի կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ գործող համաձայնագրերի ցանցի շրջանակներում առանց յուրաքանչյուր այդպիսի համաձայնագրի շուրջ կրկին երկկողմ բանակցություններ վարելու անհրաժեշտության համաժամանակյա եւ գործուն կերպով համաձայնեցված փոփոխություններ իրականացնելու համար,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՄԱՍ I

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 1. Կոնվենցիայի գործողության ոլորտը

Սույն կոնվենցիան փոփոխում է 2-րդ հոդվածի (Եզրույթների մեկնաբանություն) 1-ին կետի «ա» ենթակետով սահմանված բոլոր Կարգավորող հարկային համաձայնագրերը:

Հոդված 2. Եզրույթների մեկնաբանությունը

1. Սույն կոնվենցիայի նպատակներով կիրառվում են հետևյալ սահմանումները.

ա) «Կարգավորող հարկային համաձայնագիր» եզրույթը նշանակում է եկամտի նկատմամբ հարկերի (անկախ այն հանգամանքից՝ այլ հարկեր կարգավորվում են, թե՛ ոչ) գծով կրկնակի հարկումից խուսափելու վերաբերյալ համաձայնագիր՝

i) որն ուժի մեջ է մտել երկու կամ ավելի՝

Ա) Կողմերի միջև եւ (կամ)

Բ) երկրների կամ տարածքների միջև, որոնք վերոնշյալ համաձայնագրի կողմ են, եւ որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է Կողմը, եւ

ii) որի մասով յուրաքանչյուր այդպիսի Կողմ ծանուցել է Ավանդապահին՝ նշելով համաձայնագիրը, ինչպես նաեւ այն փոփոխող կամ դրան ուղեկցող ցանկացած փաստաթուղթ (սահմանված անվանումով, կողմերի անուններով (անվանումներով), ստորագրման ամսաթվով եւ ծանուցման ժամանակ կիրառելի լինելու դեպքում՝ ուժի մեջ մտնելու ամսաթվով)՝ որպես համաձայնագիր, որը նա ցանկանում է, որ կարգավորվի սույն կոնվենցիայով:

բ) «Կողմ» եզրույթը նշանակում է՝

i) Պետություն, որի համար սույն կոնվենցիան ուժի մեջ է մտել 34-րդ հոդվածին (Ուժի մեջ մտնելը) համապատասխան, կամ

ii) երկիր, որն ստորագրել է սույն կոնվենցիան՝ 27-րդ հոդվածի 1-ին կետի «բ» եւ «գ» ենթակետերին (Ստորագրումը եւ վավերացումը, ընդունումը կամ հաստատումը) համապատասխան, եւ որի համար սույն կոնվենցիան ուժի մեջ է մտել 34-րդ հոդվածին (Ուժի մեջ մտնելը) համապատասխան:

գ) «Պայմանավորվող երկիր» եզրույթը նշանակում է Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ:

դ) «Ստորագրող» եզրույթը նշանակում է Պետություն կամ երկիր, որն ստորագրել է սույն կոնվենցիան, սակայն որի համար Կոնվենցիան դեռ ուժի մեջ չի մտել:

2. Ինչ վերաբերում է ցանկացած ժամանակ սույն կոնվենցիան Կողմի կողմից կիրառելուն, ապա դրանով չսահմանված ցանկացած եզրույթ ունի այն նշանակությունը, որն այն ունի այդ պահին համապատասխան Կարգավորող հարկային համաձայնագրի համաձայն, եթե համատեքստով այլ բան չի պահանջվում:

ՄԱՍ II

ՀԻՐԻԴԱՅԻՆ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 3. Թափանցիկ սուբյեկտները

1. Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակներով այն սուբյեկտի կողմից կամ այն կարգավորման միջոցով ստացված եկամուտը, որը Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի հարկային օրենքով ընկալվում է որպես ամբողջովին կամ մասնակի ֆինանսապես թափանցիկ, համարվում է Պայմանավորվող երկրի ռեզիդենտի եկամուտ, սակայն միայն այնքանով, որքանով եկամուտն այդ Պայմանավորվող երկրի կողմից հարկման նպատակներով ընկալվում է որպես այդ Պայմանավորվող երկրի ռեզիդենտի եկամուտ:

2. Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթները, որոնք Պայմանավորվող երկրից պահանջում են եկամտային հարկից ազատում կամ նվազեցում կամ վարկավորում, որը համարժեք է այդ Պայմանավորվող երկրի ռեզիդենտի կողմից ստացված այն եկամտի մասով վճարված եկամտային հարկին, որը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող երկրում՝ Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան, չեն կիրառվում այնքանով, որքանով այդ դրույթները թույլ են տալիս հարկում այդ մյուս Պայմանավորվող երկրի կողմից միայն այն պատճառով, որ եկամուտը նաեւ այդ մյուս Պայմանավորվող երկրի ռեզիդենտի ստացած եկամուտն է:

3. Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնց համար մեկ կամ ավելի Կողմեր կատարել են 11-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետում (Կողմի՝ սեփական ռեզիդենտներին հարկելու իրավունքը սահմանափակելուն ուղղված հարկային համաձայնագրերի կիրառումը) նշված վերապահումը, 1-ին կետի վերջում պետք է ավելացնել հետեւյալ նախադասությունը. «Սույն կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն այնպես, որ ազդեցություն ունենան Պայմանավորվող երկրի՝ այդ Պայմանավորվող երկրի ռեզիդենտներին հարկելու իրավունքի վրա»:

4. 1-ին կետը (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել 3-րդ կետով) կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում այնքանով, որքանով դրանք անդրադառնում են այն հարցին, թե արդյոք այն սուբյեկտների կողմից կամ կարգավորումների միջոցով ստացված եկամուտը, որոնք երկու Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի (ընդհանուր կանոնի միջոցով կամ որոշակի փաստական հանգամանքների եւ

սուբյեկտների կամ կարգավորումների տեսակների առնչությամբ վարվելակերպը մանրամասն սահմանելու միջոցով) հարկային օրենքով ընկալվում են որպես ֆինանսապես թափանցիկ, համարվում է Պայմանավորվող երկրի ռեզիդենտի եկամուտ, թե՛ ոչ:

5. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝
 - ա) չկիրառել ամբողջությամբ վերցրած սույն հոդվածն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում.
 - բ) չկիրառել 1-ին կետն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք արդեն իսկ պարունակում են 4-րդ կետում նշված որեւէ դրույթ.
 - գ) չկիրառել 1-ին կետն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք արդեն իսկ պարունակում են 4-րդ կետում նշված որեւէ դրույթ, որով մերժվում են պայմանագրային արտոնությունները երրորդ երկրում ստեղծված սուբյեկտի կողմից կամ կարգավորման միջոցով ստացված եկամտի դեպքում.
 - դ) չկիրառել 1-ին կետն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք արդեն իսկ պարունակում են 4-րդ կետում նշված որեւէ դրույթ, որով մանրամասն սահմանվում է որոշակի փաստական հանգամանքների եւ սուբյեկտների կամ կարգավորումների տեսակների առնչությամբ վարվելակերպը.
 - ե) չկիրառել 1-ին կետն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք արդեն իսկ պարունակում են 4-րդ կետում նշված որեւէ դրույթ, որով մանրամասն սահմանվում է որոշակի փաստական հանգամանքների եւ սուբյեկտների կամ կարգավորումների տեսակների առնչությամբ վարվելակերպը, եւ մերժվում են պայմանագրային արտոնությունները երրորդ երկրում ստեղծված սուբյեկտի կողմից կամ կարգավորման միջոցով ստացված եկամտի դեպքում.
 - զ) չկիրառել 2-րդ կետն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում.
 - է) կիրառել 1-ին կետը միայն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք արդեն իսկ պարունակում են 4-րդ կետում նշված որեւէ դրույթ, որը մանրամասն սահմանում է որոշակի փաստական հանգամանքների եւ սուբյեկտների կամ կարգավորումների տեսակների առնչությամբ վարվելակերպը:

6. Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 5-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետում նշված վերապահումը, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 4-րդ կետում նշված որեւէ դրույթ, որի վրա չի տարածվում 5-րդ կետի «գ»-«ե» ենթակետերով նախատեսված վերապահումը, իսկ պարունակելու դեպքում՝ յուրաքանչյուր այդպիսի դրույթի հոդվածի եւ կետի համարի մասին: Այն դեպքում, երբ Կողմը կատարել է 5-րդ կետի «է» ենթակետում նշված վերապահումը, նախորդ նախադասությամբ նախատեսված ծանուցումը սահմանափակվում է Կարգավորող հարկային համաձայնագրերով, որոնց վրա տարածվում է այդ վերապահումը: Եթե բոլոր Պայմանավորվող երկրները ներկայացրել են այդպիսի ծանուցում Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի մասով, ապա այդ դրույթը փոխարինվում է 1-ին կետի (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել 3-րդ կետով) դրույթներով՝ 4-րդ կետով նախատեսված սահմաններում: Մյուս դեպքերում 1-ին կետը (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել 3-րդ կետով) փոխարինում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին միայն այնքանով, որքանով այդ դրույթներն անհամատեղելի են 1-ին կետի հետ (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել 3-րդ կետով):

Հոդված 4. Կրկնակի ռեզիդենտություն ունեցող սուբյեկտները

1. Եթե Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների պատճառով անհատ չհանդիսացող անձը մեկից ավելի Պայմանավորվող երկրների ռեզիդենտ է, ապա Պայմանավորվող երկրի իրավասու մարմինները ջանքեր են գործադրում՝ փոխադարձ համաձայնությամբ որոշելու, թե որ Պայմանավորվող երկրի ռեզիդենտ է համարվելու այդ անձը Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակներով՝ հաշվի առնելով դրա արդյունավետ կառավարման վայրը, ինկորպորացված կամ այլ կերպ կազմավորված լինելու վայրը եւ համապատասխան այլ գործոններ: Այդպիսի համաձայնագրի բացակայության դեպքում այդ անձը Կարգավորող հարկային համաձայնագրով նախատեսված՝ հարկերի թեթեւացման կամ հարկերից ազատվելու իրավունք չունի՝ բացառությամբ այն դեպքի, երբ դա իրականացվում է Պայմանավորվող երկրների իրավասու մարմինների կողմից համաձայնեցված սահմաններում եւ եղանակով:

2. 1-ին կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, որոնք նախատեսում են կանոններ՝ պարզելու համար, թե արդյոք անհատ չհանդիսացող անձը համարվում է Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի ռեզիդենտ այն դեպքերում, երբ այդ անձն այլապես կհամարվեր մեկից ավելի Պայմանավորվող երկրների

ռեզիդենտ: Այնուամենայնիվ, 1-ին կետը չի կիրառվում Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների դեպքում, որոնք հատուկ անդրադառնում են կրկնակի գրանցում ունեցող ընկերության կարգավորումներին մասնակցող ընկերությունների ռեզիդենտության հարցին:

3. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝
 - ա) չկիրառելու սույն հոդվածն ամբողջությամբ իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում.
 - բ) չկիրառելու սույն հոդվածն ամբողջությամբ իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք արդեն իսկ անդրադառնում են այնպիսի դեպքերի, երբ անհատ չհանդիսացող անձը մեկից ավելի Պայմանավորվող երկրների ռեզիդենտ է՝ պահանջելով Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններից, որ ջանքեր գործադրեն Պայմանավորվող երկրի մեկ ռեզիդենտության վերաբերյալ փոխադարձ համաձայնության հասնելու համար.
 - գ) չկիրառելու սույն հոդվածն ամբողջությամբ իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք արդեն իսկ անդրադառնում են այնպիսի դեպքերի, երբ անհատ չհանդիսացող անձը մեկից ավելի Պայմանավորվող երկրների ռեզիդենտ է՝ մերժելով պայմանագրային արտոնությունները՝ առանց պահանջելու Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններից, որ ջանքեր գործադրեն Պայմանավորվող երկրի մեկ ռեզիդենտության վերաբերյալ փոխադարձ համաձայնության հասնելու համար.
 - դ) չկիրառելու սույն հոդվածն ամբողջությամբ իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք արդեն իսկ անդրադառնում են այնպիսի դեպքերի, երբ անհատ չհանդիսացող անձը մեկից ավելի Պայմանավորվող երկրների ռեզիդենտ է՝ պահանջելով Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններից, որ ջանքեր գործադրեն Պայմանավորվող երկրի մեկ ռեզիդենտության վերաբերյալ փոխադարձ համաձայնության հասնելու համար, եւ որոնք նախատեսում են այդ անձի վարվելակերպը Կարգավորող հարկային համաձայնագրի շրջանակներում՝ այդպիսի համաձայնության չհասնելու դեպքում.
 - ե) իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նպատակներով փոխարինելու 1-ին կետի վերջին նախադասությունը հետեւյալ տեքստով. «Այդպիսի համաձայնագրի բացակայության դեպքում այդպիսի անձը Կարգավորող հարկային համաձայնագրով նախատեսված՝ հարկերի

թերեւացման կամ հարկերից ազատվելու իրավունք չունի:».

- զ) չկիրառելու սույն հոդվածն ամբողջությամբ իր այն Կողմերի հետ կնքած Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում, որոնք կատարել են «ե» ենթակետում նշված վերապահումը:

4. Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 3-րդ կետի «ա» ենթակետում նշված վերապահումը, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 2-րդ կետում նշված որեւէ դրույթ, որի վրա չի տարածվում 3-րդ կետի «բ»-«դ» ենթակետերով կարգավորվող վերապահումը, իսկ պարունակելու դեպքում՝ յուրաքանչյուր այդպիսի դրույթի հոդվածի եւ կետի համարի մասին: Եթե բոլոր Պայմանավորվող երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի մասով, ապա այդ դրույթը փոխարինվում է 1-ին կետի դրույթներով: Մյուս դեպքերում 1-ին կետը փոխարինում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին միայն այնքանով, որքանով այդ դրույթներն անհամատեղելի են 1-ին կետի հետ:

Հոդված 5. Կրկնակի հարկման բացառման մեթոդների կիրառումը

1. Կողմը կա՛մ կարող է ընտրել 2-րդ եւ 3-րդ կետերի (Ա տարբերակ), 4-րդ եւ 5-րդ կետերի (Բ տարբերակ) կամ 6-րդ եւ 7-րդ կետերի (Գ տարբերակ) կիրառումը, կա՛մ կարող է չընտրել նշված տարբերակներից եւ ոչ մեկի կիրառումը: Եթե Կարգավորող հարկային համաձայնագրի յուրաքանչյուր Պայմանավորվող երկիր ընտրում է տարբեր տարբերակ (կամ եթե մի Պայմանավորվող երկիր որոշում է կիրառել որեւէ տարբերակ, իսկ մեկ այլ երկիր չի ընտրում տարբերակներից եւ ոչ մեկի կիրառումը), ապա յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի ընտրած տարբերակը կիրառվում է նրա սեփական ռեզիդենտների դեպքում:

Տարբերակ Ա

2. Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթները, որոնցով այլապես Պայմանավորվող երկրի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ նրա ունեցած կապիտալն այդ Պայմանավորվող երկրում կազատվեր հարկերից կրկնակի հարկումը բացառելու նպատակով, չեն կիրառվում, եթե մյուս Պայմանավորվող երկիրը կիրառում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներն այդպիսի եկամուտը կամ կապիտալը հարկերից ազատելու կամ այն դրույթաչափը սահմանափակելու նպատակով, որով այդ եկամուտը կամ կապիտալը կարող է

հարկվել: Վերջին դեպքում առաջին հիշատակված Պայմանավորվող երկիրը թույլ է տալիս այդ ռեզիդենտի եկամտի կամ կապիտալի մասով հարկից մասհանում կատարել այդ մյուս Պայմանավորվող երկրում վճարված հարկին համարժեք գումարի չափով: Այնուամենայնիվ, այդպիսի մասհանումը չպետք է գերազանցի մասհանումը տրամադրելուց առաջ հաշվարկված հարկի այն մասը, որը վերագրվում է եկամտի կամ կապիտալի այնպիսի տարրերին, որոնք կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող երկրում:

3. 2-րդ կետը կիրառվում է այն Կարգավորող հարկային համաձայնագրի դեպքում, որով Պայմանավորվող երկրից այլապես կպահանջվեր այդ կետում նշված եկամուտը կամ կապիտալն ազատել հարկերից:

Տարբերակ Բ

4. Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթները, որոնցով այլապես Պայմանավորվող երկրի ռեզիդենտի ստացած եկամուտն այդ Պայմանավորվող երկրում կազատվեր հարկերից՝ կրկնակի հարկումից խուսափելու նպատակով, քանի որ այդպիսի եկամուտը Պայմանավորվող երկրի կողմից ընկալվում է որպես շահութաբաժին, չեն կիրառվում, եթե այդպիսի եկամուտը հանգեցնում է մասհանման՝ մյուս Պայմանավորվող երկրի ռեզիդենտի՝ հարկման ենթակա շահույթն այդ մյուս Պայմանավորվող երկրի օրենքներին համապատասխան որոշելու նպատակով: Այդ դեպքում առաջին հիշատակված Պայմանավորվող երկիրը թույլ է տալիս այդ ռեզիդենտի եկամտի մասով հարկից մասհանում կատարել այդ մյուս Պայմանավորվող երկրում վճարված եկամտային հարկին համարժեք գումարի չափով: Այնուամենայնիվ, այդպիսի մասհանումը չպետք է գերազանցի մասհանումը տրամադրելուց առաջ հաշվարկված եկամտային հարկի այն մասը, որը վերագրվում է այնպիսի եկամտին, որը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող երկրում:

5. 4-րդ կետը կիրառվում է այն Կարգավորող հարկային համաձայնագրի դեպքում, որով այլապես Պայմանավորվող երկրից կպահանջվեր այդ կետում նշված եկամուտն ազատել հարկերից:

Տարբերակ Գ

6. ա) Եթե Պայմանավորվող երկրի ռեզիդենտն ստանում է եկամուտ կամ ունի կապիտալ, որը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող երկրում՝ Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին

համապատասխան (բացառությամբ այն դեպքերի, երբ այդ դրույթները թույլ են տալիս հարկում այդ մյուս Պայմանավորվող երկրի կողմից միայն այն պատճառով, որ եկամուտը նաեւ համարվում է այդ մյուս Պայմանավորվող երկրի ռեզիդենտի ստացած եկամուտ), ապա առաջին հիշատակված Պայմանավորվող երկիրը թույլ է տալիս՝

- i) այդ ռեզիդենտի եկամտային հարկից մասհանում կատարել այդ մյուս Պայմանավորվող երկրում վճարված եկամտային հարկին համարժեք գումարի չափով.
- ii) այդ ռեզիդենտի կապիտալի մասով հարկից մասհանում կատարել այդ մյուս Պայմանավորվող երկրում վճարված կապիտալի հարկին համարժեք գումարի չափով:

Այնուամենայնիվ, այդպիսի մասհանումը չպետք է գերազանցի մասհանումը տրամադրելուց առաջ հաշվարկված եկամտային հարկի կամ կապիտալի հարկի այն մասը, որը վերագրվում է այնպիսի եկամտին կամ կապիտալին, որը կարող է հարկվել այդ մյուս Պայմանավորվող երկրում:

- բ) Եթե Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի համապատասխան Պայմանավորվող երկրի ռեզիդենտի ստացած եկամուտը կամ նրա ունեցած կապիտալն այդ Պայմանավորվող երկրում ազատվում է հարկերից, ապա այդ Պայմանավորվող երկիրն այդ ռեզիդենտի մնացած եկամտի կամ կապիտալի մասով հարկի գումարը հաշվարկելիս, այնուհանդերձ, կարող է հաշվի առնել հարկերից ազատված եկամուտը կամ կապիտալը:

7. 6-րդ կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների փոխարեն, որոնք կրկնակի հարկումը բացառելու նպատակով Պայմանավորվող երկրից պահանջում են այդ Պայմանավորվող երկրում Պայմանավորվող երկրի ռեզիդենտի ստացած այն եկամտի կամ նրա ունեցած կապիտալի հարկերից ազատում, որոնք, Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող են հարկվել մյուս Պայմանավորվող երկրում:

8. Այն Կողմը, որը չի ընտրում 1-ին կետով սահմանված տարբերակներից եւ ոչ մեկի կիրառումը, կարող է իրեն իրավունք վերապահել չկիրառելու ամբողջությամբ վերցրած սույն հոդվածը մեկ կամ մեկից ավելի՝ սահմանված Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում (կամ իր բոլոր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում):

9. Այն Կողմը, որը չի ընտրում Գ տարբերակի կիրառումը, կարող է մեկ կամ ավելի՝ սահմանված Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում (կամ իր բոլոր Կարգավորող հարկային համաձայնագրերի դեպքում) իրեն իրավունք վերապահել չթույլատրելու մյուս Պայմանավորվող երկրին (երկրներին) կիրառել Գ տարբերակը:

10. Յուրաքանչյուր Կողմ, որն ընտրում է 1-ին կետում սահմանված որեւէ տարբերակի կիրառումը, Ավանդապահին ծանուցում է իր ընտրած տարբերակի մասին: Այդպիսի ծանուցումը պետք է նաեւ ներառի՝

- ա) այն Կողմի դեպքում, որն ընտրում է Ա տարբերակի կիրառումը, 3-րդ կետում նշված որեւէ դրույթ պարունակող իր Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկը, ինչպես նաեւ այդպիսի յուրաքանչյուր դրույթի հոդվածի եւ կետի համարը.
- բ) այն Կողմի դեպքում, որն ընտրում է Բ տարբերակի կիրառումը, 5-րդ կետում նշված որեւէ դրույթ պարունակող իր Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկը, ինչպես նաեւ այդպիսի յուրաքանչյուր դրույթի հոդվածի եւ կետի համարը.
- գ) այն Կողմի դեպքում, որն ընտրում է Գ տարբերակի կիրառումը, 7-րդ կետում նշված որեւէ դրույթ պարունակող իր Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկը, ինչպես նաեւ այդպիսի յուրաքանչյուր դրույթի հոդվածի եւ կետի համարը:

Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի մասով համապատասխան տարբերակը կիրառվում է միայն այն դեպքում, երբ այդ տարբերակի կիրառումն ընտրած Կողմն այդ դրույթի վերաբերյալ ներկայացրել է այդպիսի ծանուցում:

ՄԱՍ III

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ

Հոդված 6. Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակը

1. Կարգավորող հարկային համաձայնագիրը փոփոխվում է այնպես, որ նախաբանի տեքստում ներառի հետևյալը.

«Նպատակ ունենալով վերացնելու սույն համաձայնագրով նախատեսված հարկերի մասով կրկնակի հարկումը՝ առանց հարկերից խուսափելու կամ դրանք շրջանցելու միջոցով հարկման բացառման կամ նվազեցված հարկման հնարավորություններ ստեղծելու (այդ թվում՝ պայմանագրի առավելություններից օգտվելուն ուղղված կարգավորումների միջոցով, որոնք ուղղված են սույն համաձայնագրով նախատեսված՝ երրորդ երկրների ռեզիդենտների՝ անուղղակի արտոնության մասով հարկերից թեթևացում ստանալուն),»:

2. 1-ին կետում նշված տեքստը Կարգավորող հարկային համաձայնագրում ներառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի՝ կրկնակի հարկումը վերացնելու մտադրությանը վերաբերող նախաբանի ձեակերպման փոխարեն կամ դրա բացակայության դեպքում՝ անկախ նրանից՝ այդ ձեակերպումը վերաբերում է նաեւ հարկումը բացառելու կամ նվազեցված հարկման հնարավորություններ չստեղծելու մտադրությանը, թե՛ ոչ:

3. Կողմը կարող է նաեւ որոշել ներառելու նախաբանի հետևյալ տեքստն իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերում, որոնք չեն պարունակում տնտեսական հարաբերությունները զարգացնելու կամ հարկային հարցերում համագործակցությունն ընդլայնելու ցանկությանը վերաբերող նախաբանի ձեակերպում.

«Ցանկանալով էլ ավելի զարգացնել իրենց տնտեսական հարաբերությունները եւ ընդլայնել իրենց համագործակցությունը հարկային հարցերում,»:

4. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել չկիրառելու 1-ին կետն իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն պարունակում են նախաբանի ձեակերպում, որը նկարագրում է Պայմանավորվող երկրների՝ կրկնակի հարկումը վերացնելու մտադրությունը՝ առանց հարկման

բացառման կամ նվազեցված հարկման հնարավորություններ ստեղծելու, անկախ նրանից՝ այդ ձեռակերպումը սահմանափակվում է հարկերից խուսափելու կամ դրանք շրջանցելու դեպքերով (այդ թվում՝ պայմանագրի առավելություններից օգտվելուն ուղղված կարգավորումների միջոցով, որոնք ուղղված են Կարգավորող հարկային համաձայնագրով նախատեսված՝ երրորդ երկրների ռեզիդենտների՝ անուղղակի արտոնության մասով հարկերից թեթևացում ստանալուն), թե կիրառվում է ավելի լայնորեն:

5. Յուրաքանչյուր Կողմ Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր՝ 4-րդ կետով սահմանված վերապահման շրջանակներում չգտնվող Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 2-րդ կետում նշված նախաբանի ձեռակերպումը, եւ եթե այո, ապա նախաբանի համապատասխան կետի տեքստը: Այն դեպքում, երբ Պայմանավորվող բոլոր երկրները նախաբանի ձեռակերպման վերաբերյալ այդպիսի ծանուցում են ներկայացրել, նախաբանի այդպիսի ձեռակերպումը փոխարինվում է 1-ին կետում նշված տեքստով: Մնացած դեպքերում 1-ին կետում նշված տեքստը ներառվում է որպես հավելում նախաբանի առկա ձեռակերպմանը:

6. Յուրաքանչյուր Կողմ, որն ընտրում է կիրառել 3-րդ կետը, Ավանդապահին ծանուցում է իր որոշման մասին: Այդպիսի ծանուցումը ներառում է նաեւ նրա այն Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկը, որոնք արդեն չեն պարունակում տնտեսական հարաբերությունները զարգացնելու կամ հարկային հարցերում համագործակցությունն ընդլայնելու ցանկությանը վերաբերող նախաբանի ձեռակերպում: 3-րդ կետում նշված տեքստը Կարգավորող հարկային համաձայնագրում ներառվում է միայն այն դեպքում, երբ Պայմանավորվող բոլոր երկրները որոշել են կիրառել այդ կետը եւ Կարգավորող հարկային համաձայնագրի վերաբերյալ այդպիսի ծանուցում են ներկայացրել:

Հոդված 7. Պայմանագրի չարաշահման կանխումը

1. Չնայած Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին՝ Կարգավորող հարկային համաձայնագրով սահմանված արտոնությունը չի շնորհվում եկամտի կամ կապիտալի տարրի նկատմամբ, եթե հաշվի առնելով բոլոր համապատասխան փաստերն ու հանգամանքները՝ հիմքեր կան եզրակացնելու, որ այդ արտոնությունն ստանալն այդ արտոնությանն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հանգեցրած ցանկացած պայմանավորվածության կամ գործարքի գլխավոր նպատակներից մեկն էր, եթե չի հաստատվել, որ այդպիսի հանգամանքներում այդ արտոնությունը շնորհելը համապատասխան կլիներ

Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթների առարկային եւ նպատակներին:

2. 1-ին կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, որոնք մերժում են այն բոլոր արտոնությունները կամ դրանց մի մասը, որոնք այլապես կտրամադրվեին Կարգավորող հարկային համաձայնագրով, եթե որեւէ պայմանավորվածության կամ գործարքի կամ պայմանավորվածությամբ կամ գործարքով շահագրգռված որեւէ անձի գլխավոր նպատակը կամ գլխավոր նպատակներից մեկն այդ արտոնություններն ստանալն էր:

3. 15-րդ կետի «ա» ենթակետում նշված վերապահումը չկատարած Կողմը կարող է նաեւ որոշել իր Կարգավորող հարկային համաձայնագրերի մասով կիրառել 4-րդ կետը:

4. Այն դեպքում, երբ անձին մերժում են Կարգավորող հարկային համաձայնագրով սահմանված արտոնությունը Կարգավորող հարկային համաձայնագրի (քանի որ այն կարող է փոփոխվել սույն կոնվենցիայով) այն դրույթներով, որոնք մերժում են այն բոլոր արտոնությունները կամ դրանց մի մասը, որոնք այլապես կտրամադրվեին Կարգավորող հարկային համաձայնագրով, եթե որեւէ պայմանավորվածության կամ գործարքի կամ պայմանավորվածությամբ կամ գործարքով շահագրգռված որեւէ անձի գլխավոր նպատակը կամ գլխավոր նպատակներից մեկն այդ արտոնություններն ստանալն էր, ապա Պայմանավորվող երկրի իրավասու մարմինը, որն այլապես այս արտոնությունը շնորհած կլիներ, այնուամենայնիվ, այդ անձին վերաբերվում է որպես այս արտոնությունը կամ եկամտի կամ կապիտալի որոշակի տարրի մասով այլ արտոնություններ ստանալու իրավունք ունեցող անձի, եթե այդ իրավասու մարմինը, համաձայն այդ անձից ստացված դիմում-խնդրանքի եւ համապատասխան փաստերն ու հանգամանքներն ուսումնասիրելուց հետո, որոշում է, որ այդպիսի արտոնություններն այդ անձին շնորհված կլինեին գործարքի կամ պայմանավորվածության բացակայության դեպքում: Պայմանավորվող երկրի իրավասու մարմինը, որին սույն կետում նշված դիմում-խնդրանքը ներկայացվել է մյուս Պայմանավորվող երկրի ռեզիդենտի կողմից, մինչեւ դիմում-խնդրանքը մերժելը խորհրդակցում է այդ մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմնի հետ:

5. 4-րդ կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել սույն կոնվենցիայով) այն դրույթների նկատմամբ, որոնք մերժում են այն բոլոր արտոնությունները կամ դրանց մի մասը, որոնք այլապես կտրամադրվեին Կարգավորող հարկային համաձայնագրով, եթե որեւէ պայմանավորվածության կամ գործարքի կամ պայմանավորվածությամբ կամ

գործարքով շահագրգռված որեւէ անձի գլխավոր նպատակը կամ գլխավոր նպատակներից մեկն այդ արտոնություններն ստանալն էր:

6. Կողմը կարող է նաեւ որոշել կիրառել 8-13-րդ կետերում պարունակվող դրույթները (այսուհետ՝ Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթներ) իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ՝ ներկայացնելով 17-րդ կետի «գ» ենթակետում նշված ծանուցումը: Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները կիրառվում են Կարգավորող հարկային համաձայնագրի մասով միայն այն դեպքում, երբ Պայմանավորվող բոլոր երկրները որոշել են այն կիրառել:

7. Այն դեպքերում, երբ Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրների որոշ մասը, բայց ոչ բոլորը, որոշում են համաձայն 6-րդ կետի կիրառել Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները, ապա չնայած այդ կետի դրույթներին՝ Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները կիրառվում են Կարգավորող հարկային համաձայնագրով սահմանված արտոնությունների շնորհման մասով՝

- ա) Պայմանավորվող բոլոր երկրների կողմից, եթե Պայմանավորվող բոլոր երկրները, որոնք չեն որոշում համաձայն 6-րդ կետի կիրառել Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները, համաձայնում են այդպիսի կիրառության՝ որոշելով կիրառել սույն ենթակետը եւ համապատասխանաբար ծանուցելով Ավանդապահին, կամ
- բ) միայն Պայմանավորվող այն երկրների կողմից, որոնք որոշում են կիրառել Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները, եթե Պայմանավորվող բոլոր երկրները, որոնք չեն որոշում համաձայն 6-րդ կետի կիրառել Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները, համաձայնում են այդպիսի կիրառության՝ որոշելով կիրառել սույն ենթակետը եւ համապատասխանաբար ծանուցելով Ավանդապահին:

Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները

8. Բացառությամբ Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթներով նախատեսված դեպքերի՝ Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտը չունի այն արտոնության իրավունքը, որը այլապես կտրվեր Կարգավորող հարկային համաձայնագրով՝ բացի Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներով սահմանված արտոնությունից՝

- ա) որոնցով որոշվում է անհատ չհանդիսացող այն անձի ռեզիդենտությունը, որը Կարգավորող հարկային համաձայնագրի՝ Պայմանավորվող երկրի ռեզիդենտին սահմանող դրույթների ուժով մեկից ավելի Պայմանավորվող երկրի ռեզիդենտ է.
- բ) որոնցով նախատեսված է, որ Պայմանավորվող երկիրը, համաձայն Կարգավորող հարկային համաձայնագրի, մյուս Պայմանավորվող երկրի՝ նշված առաջին Պայմանավորվող երկրում ձեռնարկության շահույթից գանձված հարկի գումարի մասով կատարած նախնական ճշգրտումից հետո այդ Պայմանավորվող երկրի ձեռնարկությանը կշնորհի համապատասխան ճշգրտում, կամ
- գ) որոնցով Պայմանավորվող երկրի ռեզիդենտներին թույլատրվում է խնդրանքով դիմել, որ այդ Պայմանավորվող երկրի իրավասու մարմինն ուսումնասիրի հարկման դեպքերը, որոնք Կարգավորող հարկային համաձայնագրին համապատասխան չեն,

եթե այդպիսի ռեզիդենտը արտոնություն տալու պահին «որակավորված անձ» չէ, ինչպես սահմանված է 9-րդ կետում:

9. Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտը համարվում է որակավորված անձ այն պահին, երբ արտոնությունը Կարգավորող հարկային համաձայնագրով այլապես կտրամադրվեր, եթե այդ պահին ռեզիդենտը՝

- ա) անհատ է.
- բ) այդ Պայմանավորվող երկիրն է կամ դրա վարչատարածքային միավորը կամ տեղական իշխանության մարմինը, կամ այդպիսի որեւէ Պայմանավորվող երկրի, վարչատարածքային միավորի կամ տեղական իշխանության մարմնի գործակալությունը կամ գործակից մարմինը.
- գ) ընկերություն կամ այլ սուբյեկտ է, եթե նրա բաժնեմասերի գլխավոր դասը կանոնավոր վաճառվում է մեկ կամ ավելի՝ ճանաչված ֆոնդային բորսայում.

- դ) անհատ չհանդիսացող անձ է, որը՝
- i) շահույթ չհետապնդող այնպիսի կազմակերպություն է, որին դիվանագիտական նոտաների փոխանակմամբ համաձայնել են Պայմանավորվող երկրները, կամ
 - ii) այդ Պայմանավորվող երկրում հաստատված սուբյեկտ կամ կառուցվածք է, որն այդ Պայմանավորվող երկրի հարկային օրենսդրությամբ դիտվում է որպես առանձին անձ, եւ
 - Ա) որը հաստատված է եւ գործում է բացառապես կամ գրեթե բացառապես կառավարելու կամ անհատներին կենսաթոշակային եւ լրացուցիչ կամ կողմնակի օգուտներ տրամադրելու համար, եւ որը, որպես այդպիսին, կարգավորվում է այդ Պայմանավորվող երկրի կամ նրա վարչատարածքային միավորներից կամ տեղական իշխանության մարմիններից մեկի կողմից, կամ
 - Բ) որը հաստատված է եւ գործում է բացառապես կամ գրեթե բացառապես «Ա» ենթակետում նշված սուբյեկտների կամ կառուցվածքների օգտին ֆինանսական միջոցներ ներդնելու համար.
- ե) անհատ չհանդիսացող անձ է, եթե այլապես արտոնություն տալու պահը ներառող տասներկուամյա ժամանակահատվածի օրերի առնվազն կեսին այն անձինք, որոնք այդ Պայմանավորվող երկրի ռեզիդենտներ են եւ Կարգավորող հարկային համաձայնագրի «ա»-«դ» ենթակետերով ունեն արտոնության իրավունք, ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում են անձի բաժնեմասերի նվազագույնը 50 տոկոսին:
10. ա) Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտը, անկախ նրանից՝ որակավորված անձ է, թե՛ ոչ, Կարգավորող հարկային համաձայնագրի արտոնությունների իրավունք կունենա մյուս Պայմանավորվող երկրից ստացած եկամտի տարրի մասով, եթե ռեզիդենտը նշված առաջին Պայմանավորվող երկրում ներգրավված է ակտիվ բիզնես գործունեության մեջ, եւ մյուս Պայմանավորվող երկրից ստացած եկամուտն առաջանում է այդ գործունեությունից կամ առնչվում է դրան: Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթների նպատակներով «ակտիվ բիզնես գործունեություն» եզրույթը չի ներառում հետեւյալ գործունեությունները կամ դրանց որեւէ համակցություն.

- i) որպես հողդինգային ընկերություն գործելը.
 - ii) ընկերությունների խմբի ընդհանուր վերահսկողություն կամ կառավարում ապահովելը.
 - iii) խմբային ֆինանսավորում ապահովելը (ներառյալ դրամական միջոցների միավորումը), կամ
 - iv) ներդրումներ կատարելը կամ կառավարելը, եթե այս գործունեությունը չի իրականացվում բանկի, ապահովագրական ընկերության կամ արժեթղթերի գրանցված դիլերի կողմից՝ որպես այդպիսին իր բիզնես գործունեության բնականոն գործունեության ընթացքում:
- բ) Եթե Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտը եկամտի տարր է ստանում այդ ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող երկրում իրականացվող բիզնես գործունեությունից կամ մյուս Պայմանավորվող երկրում առաջացող եկամտի տարր է ստանում իր հետ փոխկապակցված անձից, ապա «ա» ենթակետում նշված պայմաններն այդպիսի տարրի մասով համարվում են բավարարված միայն այն դեպքում, երբ ռեզիդենտի կողմից նշված առաջին Պայմանավորվող երկրում իրականացվող այն բիզնես գործունեությունը, որի հետ կապված է տարրը, էական է նույն գործունեության կամ մյուս Պայմանավորվող երկրում ռեզիդենտի կամ իր հետ փոխկապակցված այդպիսի անձի կողմից իրականացվող փոխլրացնող բիզնես գործունեության առնչությամբ: Այն հանգամանքը, թե արդյոք բիզնես գործունեությունը սույն ենթակետի նպատակներով էական է, որոշվում է բոլոր փաստերի եւ հանգամանքների հիման վրա:
- գ) Սույն կետը կիրառելու նպատակներով Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտի հետ փոխկապակցված անձանց իրականացրած գործունեությունը համարվում է այդպիսի ռեզիդենտի կողմից իրականացվող:

11. Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի այն ռեզիդենտը, որը որակավորված անձ չէ, նույնպես ունի այն արտոնության իրավունքը, որն այլապես եկամտի տարրի մասով կտրվեր Կարգավորող հարկային համաձայնագրով, եթե այլապես արտոնություն տալու պահը ներառող ցանկացած տասներկուամյա ժամանակահատվածի օրերի առնվազն կեսին այն անձինք, որոնք հավասար շահառուներ են, ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում են ռեզիդենտի բենեֆիցիար մասնաբաժնի նվազագույնը 75 տոկոսին:

12. Եթե Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտը ո՛չ 9-րդ կետի դրույթների համաձայն որակավորված անձ է, ո՛չ 10-րդ կամ 11-րդ կետերով սահմանված արտոնությունների իրավունք ունի, ապա մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմինը, այնուամենայնիվ, կարող է շնորհել Կարգավորող հարկային համաձայնագրի արտոնությունները կամ եկամտի կոնկրետ տարրի մասով արտոնությունները՝ հաշվի առնելով Կարգավորող հարկային համաձայնագրի առարկան եւ նպատակները, սակայն միայն այն դեպքում, եթե այդպիսի ռեզիդենտն այդպիսի իրավասու մարմին ներկայացնում է ապացույցներ, որ ո՛չ իր ստեղծման, ձեռք բերման կամ պահպանման, ո՛չ իր գործառնությունների իրականացման գլխավոր նպատակներից մեկը Կարգավորող հարկային համաձայնագրով սահմանված արտոնություններն ստանալը չի եղել: Մինչեւ Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի ռեզիդենտի կողմից սույն կետով ներկայացված դիմում-խնդրանքը բավարարելը կամ մերժելը՝ մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմինը, որին ներկայացվել է դիմում-խնդրանքը, պետք է խորհրդակցի նշված առաջին Պայմանավորվող երկրի իրավասու մարմնի հետ:

13. Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթների նպատակներով՝

- ա) «Ճանաչված ֆոնդային բորսա» եզրույթը նշանակում է՝
 - i) ցանկացած ֆոնդային բորսա, որը, որպես այդպիսին, ստեղծվել է կարգավորվում է Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի օրենքներով, եւ
 - ii) Պայմանավորվող երկրների իրավասու մարմինների կողմից համաձայնեցված ցանկացած այլ ֆոնդային բորսա.
- բ) «բաժնեմասերի գլխավոր դաս» եզրույթը նշանակում է ընկերության բաժնեմասերի այն դասը կամ դասերը, որոնք ներկայացնում են ընկերության ընդհանուր ձայնի եւ արժեքի մեծամասնությունը, կամ այն սուբյեկտի բենեֆիցիար մասնաբաժնի դասը կամ դասերը, որոնք, ընդհանուր առմամբ, ներկայացնում են այդ սուբյեկտի ընդհանուր ձայնի եւ արժեքի մեծամասնությունը.
- գ) «հավասար շահառու» եզրույթը նշանակում է ցանկացած անձ, որը եկամտի տարրի մասով Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրի կողմից այդ Պայմանավորվող երկրի ներպետական օրենքով, Կարգավորող հարկային համաձայնագրով կամ եկամտի այդ տարրին Կարգավորող հարկային համաձայնագրով տրվող

արտոնությանը հավասար կամ ավելի բարենպաստ ցանկացած այլ միջազգային փաստաթղթով տրված արտոնության իրավունք կունենար. որոշելու համար՝ արդյոք անձը շահաբաժինների մասով հավասար շահառու է, անձը պետք է համարվի շահաբաժինները վճարող ընկերության այն նույն կապիտալն ունեցող, որն ունի շահաբաժինների մասով արտոնություն պահանջող ընկերությունը.

դ) ընկերություն չհամարվող սուբյեկտների առնչությամբ «բաժնեմասեր» եզրույթը նշանակում է այն տոկոսները, որոնք համեմատելի են բաժնեմասերի հետ.

ե) երկու անձինք «փոխկապակցված անձինք» են, եթե մեկն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է մյուսում բենեֆիցիար մասնաբաժնի նվազագույնը 50 տոկոսը (կամ ընկերության դեպքում՝ ընկերության բաժնեմասերի ընդհանուր ծայնի եւ արժեքի նվազագույնը 50 տոկոսը), կամ այլ անձ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է յուրաքանչյուր անձի բենեֆիցիար մասնաբաժնի նվազագույնը 50 տոկոսը (կամ ընկերության դեպքում՝ ընկերության բաժնեմասերի ընդհանուր ծայնի եւ արժեքի նվազագույնը 50 տոկոսը). ցանկացած դեպքում անձը փոխկապակցված է մյուսին, եթե համապատասխան բոլոր փաստերի եւ հանգամանքների հիման վրա մեկը կառավարում է մյուսին, կամ երկուսն էլ գտնվում են նույն անձի կամ անձանց կառավարման ներքո:

14. Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները կիրառվում են Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, որոնք կսահմանափակեին Կարգավորող հարկային համաձայնագրի արտոնությունները (կամ որոնք կսահմանափակեին Կարգավորող հարկային համաձայնագրի՝ գտնվելու վայրին, փոխկապակցված ձեռնարկություններին կամ խտրականության արգելքին վերաբերող դրույթներով սահմանված արտոնությունից կամ միայն Պայմանավորվող երկրի ռեզիդենտներով չսահմանափակված արտոնությունից բացի այլ արտոնություններ) միայն այն ռեզիդենտի նկատմամբ, որը համապատասխանում է այդպիսի արտոնությունների տրամադրման պահանջներին՝ բավարարելով մեկ կամ ավելի դասակարգային թեստերի պահանջները:

15. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝

ա) 1-ին կետը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ այն հիմքով, որ ինքը նախատեսում է ընդունել արտոնության

մանրամասն սահմանափակման դրույթների համակցություն եւ որոշում է անդրադառնալ կա՛մ ֆինանսավորման գաղտնի սխեմաներին, կա՛մ գլխավոր նպատակի թեստին՝ այդպիսով բավարարելով պայմանագրի չարաշահման կանխման նվազագույն չափանիշները՝ սահմանված ՏՀԶԿ/Մեծ քսանյակի ԲԽՇՏ փաթեթով. այսպիսի դեպքերում Պայմանավորվող երկրները ջանքեր են գործադրում փոխշահավետ այնպիսի լուծման հասնելու համար, որը բավարարում է նվազագույն չափանիշները.

- բ) 1-ին կետը (եւ 4-րդ կետն այն Կողմի դեպքում, որը որոշել է կիրառել այդ կետը) չկիրառել իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն իսկ պարունակում են դրույթներ, որոնք մերժում են այն բոլոր արտոնությունները, որոնք այլապես կտրամադրվեին Կարգավորող հարկային համաձայնագրով, եթե որեւէ պայմանավորվածության կամ գործարքի կամ պայմանավորվածությամբ կամ գործարքով շահագրգռված որեւէ անձի գլխավոր նպատակը կամ գլխավոր նպատակներից մեկն այդ արտոնություններն ստանալն էր.
- գ) Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները չկիրառել իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն իսկ պարունակում են 14-րդ կետում նշված դրույթները:

16. Բացառությամբ այն դեպքի, երբ Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները, համաձայն 7-րդ կետի, Կարգավորող հարկային համաձայնագրով սահմանված արտոնությունների շնորհման մասով կիրառվում են մեկ կամ ավելի Կողմերի կողմից, այն Կողմը, որը որոշում է համաձայն 6-րդ կետի կիրառել Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները, կարող է իրեն իրավունք վերապահել չկիրառելու սույն հոդվածն ամբողջությամբ իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի մասով, որոնց համար մյուս Պայմանավորվող երկրներից մեկը կամ ավելին չեն որոշել կիրառել Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները: Պայմանավորվող երկրներն այսպիսի դեպքերում ջանքեր են գործադրում փոխշահավետ այնպիսի լուծման հասնելու համար, որը բավարարում է պայմանագրի չարաշահման կանխման նվազագույն չափանիշները՝ սահմանված ՏՀԶԿ/Մեծ քսանյակի ԲԽՇՏ փաթեթով:

- 17. ա) Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 15-րդ կետի «ա» ենթակետում նշված վերապահումը, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից

յուրաքանչյուրը, որը ենթակա չէ 15-րդ կետի «բ» ենթակետում նշված վերապահմանը, պարունակում է 2-րդ կետում նշված դրույթ, եւ եթե այո, ապա յուրաքանչյուր այդպիսի դրույթի հոդվածի եւ կետի համարի մասին: Եթե Պայմանավորվող բոլոր երկրները Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի վերաբերյալ այդպիսի ծանուցում են ներկայացրել, ապա այդ դրույթը փոխարինվում է 1-ին կետի (եւ, եթե կիրառելի է, 4-րդ կետի) դրույթներով: Մյուս դեպքերում 1-ին կետը (եւ, եթե կիրառելի է, 4-րդ կետը) փոխարինում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին միայն այնքանով, որքանով այդ դրույթներն անհամատեղելի են 1-ին կետի (եւ, եթե կիրառելի է, 4-րդ կետի) հետ: Սույն ենթակետով սահմանված ծանուցում ներկայացնող Կողմը կարող է նաեւ ներառել հայտարարություն, որ, չնայած այդ Կողմն ընդունում է 1-ին կետի՝ միայն որպես միջանկյալ միջոցի կիրառությունը, ինքը նպատակ ունի հնարավորության դեպքում երկկողմ բանակցության միջոցով ընդունելու արտոնությունների սահմանափակման դրույթներ՝ ի հավելումն 1-ին կետի կամ դրա փոխարեն:

- բ) Յուրաքանչյուր Կողմ, որը որոշում է կիրառել 4-րդ կետը, Ավանդապահին ծանուցում է իր որոշման մասին: 4-րդ կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ միայն այն դեպքում, երբ Պայմանավորվող բոլոր երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել:
- գ) Յուրաքանչյուր Կողմ, որը որոշում է համաձայն 6-րդ կետի կիրառել Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները, Ավանդապահին ծանուցում է իր որոշման մասին: Եթե այդպիսի Կողմը չի կատարել 15-րդ կետի «գ» ենթակետում նշված վերապահումը, ապա այդպիսի ծանուցումը ներառում է նաեւ նրա այն Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկը, որոնք պարունակում են 14-րդ կետում նշված դրույթը, ինչպես նաեւ յուրաքանչյուր այդպիսի դրույթի հոդվածի եւ կետի համարը:
- դ) Յուրաքանչյուր Կողմ, որը չի որոշում համաձայն 6-րդ կետի կիրառել Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները, սակայն որոշում է կիրառել 7-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետը, Ավանդապահին ծանուցում է ենթակետի իր որոշման մասին: Եթե այդպիսի Կողմը չի կատարել 15-րդ կետի «գ» ենթակետում նշված վերապահումը, ապա այդպիսի ծանուցումը ներառում է նաեւ նրա այն Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկը, որոնք

պարունակում են 14-րդ կետում նշված դրույթը, ինչպես նաև յուրաքանչյուր այդպիսի դրույթի հոդվածի եւ կետի համարը:

- ե) Եթե Պայմանավորվող բոլոր երկրները հարկային համաձայնագրի որեւէ դրույթի վերաբերյալ «գ» կամ «դ» ենթակետերով սահմանված ծանուցում են ներկայացրել, ապա այդ դրույթը փոխարինվում է Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթներով: Մյուս դեպքերում Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթները փոխարինում են Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին միայն այնքանով, որքանով այդ դրույթներն անհամատեղելի են Արտոնությունների պարզեցված սահմանափակման դրույթների հետ:

Հոդված 8. Շահաբաժնի փոխանցման գործարքները

1. Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթները, որոնց համաձայն մի Պայմանավորվող երկրի ռեզիդենտ ընկերության կողմից վճարվող շահաբաժիններն ազատվում են հարկից, կամ նվազեցվում է դրույթաչափը, որով այդ շահաբաժինները կարող են հարկվել՝ պայմանով, որ փաստացի սեփականատերը կամ ստացողը լինի ընկերություն, որը մյուս Պայմանավորվող երկրի ռեզիդենտ է, եւ որը տիրապետում, տնօրինում կամ վերահսկում է շահաբաժիններ վճարող ընկերության կապիտալի, բաժնեմասերի, բաժնետոմսերի, ձայնի իրավունքի, քվեարկելու իրավունքի կամ սեփականության իրավունք ենթադրող այլ համանման իրավունքների որոշակի մասից ավելին, կիրառվում են միայն այն դեպքում, երբ այդ դրույթներով սահմանված՝ սեփականության իրավունքին առնչվող պայմանները գործում են 365-օրյա ժամկետում, որը ներառում է շահաբաժինները վճարելու օրը (այդ ժամկետը հաշվարկելու նպատակով հաշվի չեն առնվում սեփականության իրավունքին առնչվող փոփոխությունները, որոնք կարող են ուղղակիորեն կապված լինել բաժնեմասերը տնօրինող կամ շահաբաժինները վճարող ընկերության ընդհանուր վերակազմակերպման հետ, ինչպես, օրինակ՝ միաձուլման կամ բաժանման ձեռով վերակազմակերպման դեպքում):

2. Ակտիվի տիրապետման՝ 1-ին կետով նախատեսված նվազագույն ժամկետը կիրառվում է 1-ին կետում նշված՝ Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներով նախատեսված՝ ակտիվի տիրապետման համար սահմանված նվազագույն ժամկետի փոխարեն կամ դրա բացակայության դեպքում:

3. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝

- ա) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ.
- բ) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, եթե 1-ին կետի դրույթներով արդեն իսկ սահմանվում է՝
 - i) ակտիվի տիրապետման նվազագույն ժամկետ,
 - ii) ակտիվի տիրապետման նվազագույն ժամկետ, որն ավելի կարճ է 365-օրյա ժամկետից, կամ
 - iii) ակտիվի տիրապետման նվազագույն ժամկետ, որն ավելի երկար է 365-օրյա ժամկետից:

4. Յուրաքանչյուր Կողմ, որը 3-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ վերապահում չի կատարել, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր կողմից ստորագրված Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 1-ին կետով սահմանված դրույթ, որը ենթակա չէ 3-րդ կետի «բ» ենթակետով սահմանված վերապահման, եւ եթե դա այդպես է՝ այդպիսի յուրաքանչյուր դրույթ պարունակող հոդվածը եւ կետը: 1-ին կետը Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրներն այդ դրույթի մասին ծանուցում են ներկայացնում:

Հոդված 9. Իրենց արժեքը գլխավորապես անշարժ գույքից ձեւավորող՝ ձեռնարկությունների բաժնեմասերի կամ մասնաբաժինների օտարումից ստացված ակտիվի արժեքի հավելաճը

1. Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթները, որոնք նախատեսում են, որ Պայմանավորվող երկրի ռեզիդենտի՝ բաժնեմասերի կամ ձեռնարկությունում մասնակցության այլ իրավունքների օտարումից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող երկրում՝ պայմանով, որ այդ բաժնեմասերի կամ մասնակցության իրավունքների արժեքի որոշակի մասից ավելին պետք է ձեւավորված լինի այդ մյուս Պայմանավորվող երկրում գտնվող անշարժ գույքից (կամ պայմանով, որ ձեռնարկության գույքի որոշակի մասից ավելին կազմված լինի այդպիսի անշարժ գույքից (իրական գույք))՝

- ա) կիրառվում են օտարմանը նախորդող 365 օրվա ընթացքում համապատասխան արժեքային շեմը գերազանցելու դեպքում, եւ

բ) կիրառվում են այն բաժնեմասերի կամ համադրելի մասնաբաժինների նկատմամբ, ինչպիսիք են, օրինակ՝ ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության մասնաբաժինները (եթե այդ բաժնեմասերը կամ մասնաբաժինները դեռևս չեն նշվել)՝ ի լրումն այն բաժնեմասերի կամ իրավունքների, որոնք արդեն իսկ նշված են դրույթներում:

2. 1-ին կետի «ա» ենթակետով նախատեսված ժամկետը կիրառվում է այն ժամկետի փոխարեն կամ դրա բացակայության դեպքում, որը սահմանվում է որոշելու համար՝ արդյոք 1-ին կետում նշված՝ Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներով սահմանված համապատասխան արժեքային շեմը գերազանցվել է:

3. Կողմը կարող է նաեւ իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ կիրառել 4-րդ կետը:

4. Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակներով Պայմանավորվող երկրի ռեզիդենտի կողմից բաժնեմասերի կամ համադրելի մասնաբաժինների օտարումից, ինչպես օրինակ՝ ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության մասնաբաժինների օտարումից ստացված արժեքի հավելաճը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող երկրում, եթե օտարմանը նախորդող 365 օրվա ընթացքում այդ բաժնեմասերը կամ համադրելի մասնաբաժիններն իրենց արժեքի 50 տոկոսից ավելին ուղղակիորեն կամ անուղղակիորեն ձեւավորել են այդ մյուս Պայմանավորվող երկրում գտնվող անշարժ գույքից (իրական գույք):

5. 4-րդ կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, որոնցով նախատեսվում է, որ մի Պայմանավորվող երկրի ռեզիդենտի կողմից բաժնեմասերի կամ ձեռնարկությունում մասնակցության այլ իրավունքների օտարումից ստացված եկամտի հավելաճը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող երկրում՝ պայմանով, որ այդ բաժնեմասերի կամ մասնակցության իրավունքների արժեքի որոշակի մասից ավելին ձեւավորված լինի այդ մյուս Պայմանավորվող երկրում գտնվող անշարժ գույքից, կամ պայմանով, որ կազմակերպության գույքի ավելի քան որոշակի կոնկրետ մաս կազմված լինի այդպիսի անշարժ գույքից (իրական գույք):

6. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝

ա) 1-ին կետը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ.

- բ) 1-ին կետի «ա» ենթակետը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ.
- գ) 1-ին կետի «բ» ենթակետը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ.
- դ) 1-ին կետի «ա» ենթակետը չկիրառելու իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն իսկ պարունակում են 1-ին կետով սահմանված նույնատիպ դրույթ, որով սահմանվում է ժամկետ՝ որոշելու համար, թե արդյոք համապատասխան արժեքային շեմը գերազանցվել է.
- ե) 1-ին կետի «բ» ենթակետը չկիրառելու իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն իսկ պարունակում են 1-ին կետով սահմանված նույնատիպ դրույթ, որը վերաբերում է բաժնեմաս չհանդիսացող մասնաբաժինների օտարմանը.
- զ) 4-րդ կետը չկիրառելու իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն իսկ պարունակում են 5-րդ կետով սահմանված դրույթներ:

7. Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 6-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ վերապահում, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 1-ին կետում սահմանված դրույթը, եւ եթե դա այդպես է՝ այդպիսի յուրաքանչյուր դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: 1-ին կետը Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրներն այդ դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացնում:

8. Յուրաքանչյուր Կողմ, որը որոշում է կիրառել 4-րդ կետը, իր որոշման մասին ծանուցում է Ավանդապահին: 4-րդ կետը Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրներն այդ մասին ծանուցում են ներկայացնում: Այդ դեպքում 1-ին կետը չի կիրառվում տվյալ Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ: Այն դեպքում, երբ Կողմը վերապահում չի կատարել 6-րդ կետի «գ» ենթակետի վերաբերյալ եւ վերապահում է կատարել 6-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ, ծանուցման մեջ պետք է ներառվեն նաեւ այն Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկը, որոնք պարունակում են 5-րդ կետի դրույթը, ինչպես նաեւ այդ դրույթը պարունակող հոդվածի եւ կետի համարը: Եթե բոլոր

Պայմանավորվող երկրները սույն կետի կամ 7-րդ կետի համաձայն Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացրել, ապա այդ դրույթը փոխարինվում է 4-րդ կետի դրույթներով: Մյուս դեպքերում 4-րդ կետը Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին փոխարինում է միայն այնքանով, որքանով այդ դրույթները համատեղելի չեն 4-րդ կետի հետ:

Հոդված 10. Երրորդ երկրներում գտնվող մշտական հաստատությունների համար չարաշահումներից խուսափելու կանոնը

1. Այն դեպքում, երբ՝

- ա) Համաձայնեցված հարկային համաձայնագրով Պայմանավորվող երկրի ձեռնարկությունը եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող երկրից, եւ առաջին Պայմանավորվող երկիրն այդ եկամուտը վերագրում է ձեռնարկության՝ երրորդ երկրում գտնվող մշտական հաստատությանը, եւ
- բ) այդ մշտական հաստատությանը վերագրվող շահույթն առաջին Պայմանավորվող երկրում ազատված է հարկումից,

Կարգավորող հարկային համաձայնագրով նախատեսված արտոնությունները չեն կիրառվում այն եկամտի նկատմամբ, որի համար սահմանված հարկը երրորդ երկրում պակաս է այն հարկի 60 տոկոսից, որն այդ եկամտի համար կգանձվեր առաջին Պայմանավորվող երկրում, եթե այդ մշտական հաստատությունը գտնվեր առաջին Պայմանավորվող երկրում: Այդ դեպքում ցանկացած եկամուտ, որի նկատմամբ սույն կետի դրույթները կիրառելի են, հարկվում է մյուս Պայմանավորվող երկրի ներպետական օրենսդրության համապատասխան՝ անկախ Կարգավորող հարկային համաձայնագրի մյուս դրույթներից:

2. 1-ին կետը չի կիրառվում այն դեպքում, երբ 1-ին կետում նշված՝ մյուս Պայմանավորվող երկրում ստացված եկամուտն ստացվում է մշտական հաստատության միջոցով իրականացվող ակտիվ գործունեության առնչությամբ կամ այդպիսի գործունեության արդյունքում (բացառությամբ ձեռնարկության հաշվին ներդրումների կատարման, կառավարման կամ պարզապես տնօրինման, եթե այդպիսի գործունեությունը չի ենթադրում բանկի, ապահովագրական ընկերությունների կամ արժեթղթերի գրանցված դիլերների կողմից համապատասխանաբար բանկային, ապահովագրական կամ արժեթղթերի հետ կապված գործունեության իրականացում):

3. Եթե Կարգավորող հարկային համաձայնագրով նախատեսված՝

Պայմանավորվող երկրի ռեզիդենտի ստացած եկամտի մասով արտոնությունները մերժվում են 1-ին կետի համաձայն, մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմինը կարող է, այնուամենայնիվ, այդ եկամտի մասով շնորհել այդպիսի արտոնություններ, եթե իրավասու մարմինը, ի պատասխան այդ ռեզիդենտի խնդրանքի, որոշում է, որ այդպիսի արտոնությունների շնորհումն արդարացված է՝ հաշվի առնելով 1-ին եւ 2-րդ կետերի պահանջներին այդ ռեզիդենտի չհամապատասխանելու պատճառները: Պայմանավորվող երկրի իրավասու մարմինը, որին մյուս Պայմանավորվող երկրի ռեզիդենտը դիմել է նախորդ նախադասության մեջ նշված խնդրանքով, մինչեւ խնդրանքը բավարարելը կամ մերժելը խորհրդակցում է այդ մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմնի հետ:

4. 1-3-րդ կետերը կիրառվում են Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, որոնցով մերժվում կամ սահմանափակվում են այն արտոնությունները, որոնք հակառակ դեպքում կշնորհվեին Պայմանավորվող երկրի այն ձեռնարկությանը, որը մյուս Պայմանավորվող երկրում ստանում է ձեռնարկության՝ երրորդ երկրում գտնվող մշտական հաստատությանը վերագրվող եկամուտ:

5. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝

ա) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ.

բ) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր այն ստորագրած Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն իսկ պարունակում են 4-րդ կետի դրույթները.

գ) սույն հոդվածը կիրառելու միայն իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն իսկ պարունակում են 4-րդ կետում սահմանված դրույթները:

6. Յուրաքանչյուր Կողմ, որը վերապահում չի կատարել 5-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետերի վերաբերյալ, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 4-րդ կետում սահմանված դրույթը, եւ եթե դա այդպես է՝ այդպիսի յուրաքանչյուր դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: Եթե բոլոր Պայմանավորվող երկրները Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացրել, ապա այդ դրույթը փոխարինվում է 1-3-րդ կետերի դրույթներով: Մյուս դեպքերում 1-3-րդ կետերը Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին փոխարինում են միայն այնքանով, որքանով այդ դրույթները համատեղելի չեն այդ կետերի հետ:

Հոդված 11. Կողմի՝ իր ռեզիդենտներին հարկելու իրավունքը սահմանափակելու նպատակով Հարկային համաձայնագրերի կիրառումը

1. Կարգավորող հարկային համաձայնագիրը չի ազդում Պայմանավորվող երկրի կողմից իր ռեզիդենտների հարկման վրա՝ բացառությամբ Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթներին համապատասխան շնորհված արտոնությունների մասով հարկման՝

- ա) որոնց համաձայն՝ տվյալ Պայմանավորվող երկիրը պարտավոր է այդ Պայմանավորվող երկրի ձեռնարկությանը մյուս Պայմանավորվող երկրի կողմից կատարված նախնական ճշգրտումից հետո տրամադրել առաջին Պայմանավորվող երկրում ձեռնարկության մշտական հաստատության շահույթի կամ փոխկապակցված ձեռնարկության շահույթի մասով գանձվող հարկի գումարին համարժեք կամ համապատասխան ճշգրտում՝ Կարգավորող հարկային համաձայնագրին համապատասխան.
- բ) որոնք կարող են ազդել տվյալ Պայմանավորվող երկրի կողմից այդ Պայմանավորվող երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի հարկման վրա, եթե այդ անձը եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող երկրին կամ նրա վարչատարածքային միավորին կամ տեղական իշխանության մարմիններին կամ նրա համանման այլ մարմնի մատուցվող ծառայություններից.
- գ) որոնք կարող են ազդել տվյալ Պայմանավորվող երկրի կողմից այդ Պայմանավորվող երկրի ռեզիդենտ հանդիսացող անձի հարկման վրա, եթե այդ անձը նաեւ ուսանող է, արտադրական պրակտիկա անցնող կամ վերապատրաստվող անձ կամ ուսուցիչ, դասավանդող, դասախոս, հրահանգիչ, հետազոտող կամ գիտական աշխատող, որը համապատասխանում է Համաձայնեցված հարկային համաձայնագրի պայմաններին.
- դ) որոնց համաձայն՝ տվյալ Պայմանավորվող երկիրը պարտավոր է այդ Պայմանավորվող երկրի ռեզիդենտներին հարկային արտոնություններ տրամադրել կամ հարկից ազատել այն եկամտի մասով, որը մյուս Պայմանավորվող երկիրը կարող է հարկել Կարգավորող հարկային համաձայնագրին համապատասխան (ներառյալ այն շահույթը, որը, Կարգավորող հարկային համաձայնագրին համապատասխան, վերագրվում է այդ մյուս Պայմանավորվող երկրում գտնվող մշտական

հաստատությանը).

- ե) որոնք տվյալ Պայմանավորվող երկրի ռեզիդենտներին պաշտպանում են այդ Պայմանավորվող երկրի կողմից իրականացվող խտրական հարկային վարչարարությունից.
- զ) որոնք տվյալ Պայմանավորվող երկրի ռեզիդենտներին թույլ են տալիս պահանջել, որ այդ Պայմանավորվող երկրի կամ Պայմանավորվող երկրներից մեկի իրավասու մարմինը հարկման դեպքերը քննի ոչ ըստ Կարգավորող հարկային համաձայնագրի.
- է) որոնք կարող են ազդել տվյալ Պայմանավորվող երկրի կողմից այդ Պայմանավորվող երկրի ռեզիդենտի հարկման վրա, եթե այդ անձը մյուս Պայմանավորվող երկրի դիվանագիտական առաքելության, պետական առաքելության կամ հյուպատոսական հիմնարկի անդամ է.
- ը) որոնցով սահմանվում է, որ մյուս Պայմանավորվող երկրի սոցիալական ապահովության մասին օրենսդրության համապատասխան վճարվող կենսաթոշակները կամ այլ վճարներ հարկվում են միայն այդ մյուս Պայմանավորվող երկրում.
- թ) որոնցով սահմանվում է, որ մյուս Պայմանավորվող երկրում վճարվող կենսաթոշակները եւ այլ համանման վճարներ, անուիտետը, ալիմենտները կամ այլ ապրուստի միջոցներ ենթակա են հարկման միայն այդ Պայմանավորվող երկրում. կամ
- ժ) որոնցով որեւէ այլ կերպ հստակ սահմանափակվում է Պայմանավորվող երկրի՝ իր ռեզիդենտներին հարկելու իրավունքը, կամ հստակ նախատեսվում է, որ այն Պայմանավորվող երկիրը, որի տարածքում ստացվում է եկամուտը, ունի այդ եկամուտը հարկելու բացառիկ իրավունք:

2. 1-ին կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, որոնցով նախատեսվում են, որ Կարգավորող հարկային համաձայնագիրը չի կարող ազդել Պայմանավորվող երկրի կողմից իր ռեզիդենտների հարկման վրա:

3. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝

- ա) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ.
- բ) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր ստորագրած այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն

իսկ պարունակում են 2-րդ կետի դրույթները:

4. Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 3-րդ կետի «ա» կամ «բ» ենթակետերի վերաբերյալ վերապահում, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 2-րդ կետում նշված դրույթը, եւ եթե դա այդպես է՝ այդպիսի յուրաքանչյուր դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: Եթե բոլոր Պայմանավորվող երկրները Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացրել, ապա այդ դրույթը փոխարինվում է 1-ին կետի դրույթներով: Մյուս դեպքերում 1-ին կետը Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին փոխարինում է միայն այն դեպքում, երբ այդ դրույթները համատեղելի չեն 1-ին կետի հետ:

ՄԱՍ IV

ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ

Հոդված 12. Կոմիսիոների միջոցով գործարքների կնքման եւ համանման ռազմավարության միջոցով մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը

1. Չնայած Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթներին, որոնցով սահմանվում է «մշտական հաստատություն» եզրույթը, այն դեպքում, երբ անձը, 2-րդ կետի համաձայն, Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրում գործում է ձեռնարկության անունից եւ այդպիսով կանոնավոր կնքում է պայմանագրեր կամ կանոնավոր գլխավոր դերակատարություն է ունենում այն պայմանագրերի կնքման հարցում, որոնք սովորաբար կնքվում են առանց ձեռնարկության կողմից էական փոփոխությունների, եւ որոնք կնքվում են՝

- ա) ձեռնարկության անունից, կամ
- բ) այդ ձեռնարկությանը պատկանող գույքի սեփականության իրավունքի փոխանցման կամ այն օգտագործելու իրավունք շնորհելու նպատակով կամ այն գույքի հետ կապված, որն այդ ձեռնարկությունն իրավունք ունի օգտագործելու, կամ
- գ) այդ ձեռնարկության կողմից ծառայությունների մատուցման նպատակով,

համարվում է, որ ձեռնարկությունն այդ Պայմանավորվող երկրում ունի մշտական հաստատություն այն գործունեության մասով, որը տվյալ անձն իրականացնում է ի շահ ձեռնարկության, եթե այդ գործունեությունն այդ Պայմանավորվող երկրում գտնվող ձեռնարկության գործունեության իրականացման կայուն վայրում ձեռնարկության կողմից իրականացվելու դեպքում գործունեության իրականացման այդ կայուն վայրը, Կարգավորող հարկային համաձայնագրում (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել սույն կոնվենցիայով) նշված սահմանմանը համապատասխան, մշտական հաստատություն չի համարվում:

2. 1-ին կետը չի կիրառվում այն դեպքում, երբ Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրում մյուս

Պայմանավորվող երկրի ձեռնարկության անունից հանդես եկող անձն առաջին Պայմանավորվող երկրում գործունեություն է իրականացնում որպես անկախ գործակալ եւ ձեռնարկության անունից հանդես է գալիս այդ գործունեության բնականոն ընթացքում: Այնուամենայնիվ, այն դեպքում, երբ անձը բացառիկ կամ գրեթե բացառիկ կերպով հանդես է գալիս մեկ կամ ավելի ձեռնարկությունների անունից, որոնց հետ անմիջականորեն կապված է, ապա սույն կետի իմաստով այդ անձը չի համարվում որեւէ ձեռնարկության անկախ գործակալ:

3. ա) 1-ին կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն, որոնցով սահմանվում են այն պայմանները, որոնց դեպքում համարվում է, որ ձեռնարկությունը Պայմանավորվող երկրում ունի մշտական հաստատություն (կամ երբ Պայմանավորվող երկրում անձն է դիտարկվում որպես մշտական հաստատություն) այն գործունեության մասով, որն անձն իրականացնում է՝ բացառությամբ անկախ գործակալի կարգավիճակ ունեցող անձի, ի շահ ձեռնարկության, սակայն միայն այն դեպքում, երբ այդ դրույթներով նախատեսվում է, որ անձն իրավասու է ձեռնարկության անունից Պայմանավորվող երկրում պայմանագրեր կնքել եւ կանոնավոր իրականացնում է այդ իրավասությունը:

բ) 2-րդ կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն, որոնցով նախատեսվում է, որ չի համարվում, որ ձեռնարկությունը Պայմանավորվող երկրում ունի մշտական հաստատություն այն գործունեության մասով, որն անկախ գործակալի կարգավիճակ ունեցող անձն իրականացնում է ի շահ ձեռնարկության:

4. Կողմը կարող է իրեն վերապահել իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իրավունք:

5. Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 4-րդ կետում նշված վերապահումը, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 3-րդ կետի «ա» ենթակետում նշված դրույթը, ինչպես նաեւ այդպիսի յուրաքանչյուր դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: 1-ին կետը Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրներն այդ դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացնում:

6. Յուրաքանչյուր Կողմ, որը վերապահում չի կատարել 4-րդ կետի

վերաբերյալ, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 3-րդ կետի «բ» ենթակետում նշված դրույթը, ինչպես նաև այդպիսի յուրաքանչյուր դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: 2-րդ կետը Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրներն այդ դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացնում:

Հոդված 13. Գործունեության որոշակի տեսակների համար սահմանված բացառությունների կիրառմամբ մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը

1. Կողմը կարող է որոշում կայացնել 2-րդ կետը (Ա տարբերակ) կամ 3-րդ կետը (Բ տարբերակ) կիրառելու կամ տարբերակներից եւ ոչ մեկը չկիրառելու մասին:

Տարբերակ Ա

2. Չնայած Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթներին, որոնցով սահմանվում է «մշտական հաստատություն» եզրույթը, «մշտական հաստատություն» եզրույթը չի ներառում՝

- ա) գործունեության այն տեսակները, որոնք Կարգավորող հարկային համաձայնագրում (նախքան սույն կոնվենցիայով կատարված փոփոխությունները) առանձին թվարկված են որպես գործունեության այնպիսի տեսակներ, որոնց իրականացումը մշտական հաստատության ձեւավորում չի ենթադրում՝ անկախ այն հանգամանքից՝ մշտական հաստատության կարգավիճակից այդ բացառությունը պայմանավորված է նախապատրաստական կամ օժանդակ բնույթ ունեցող գործունեությամբ, թե՛ ոչ,
- բ) գործունեության կայուն վայրի պահպանումը՝ ձեռնարկության համար բացառապես «ա» ենթակետում չնշված ցանկացած գործունեություն իրականացնելու նպատակով,
- գ) գործունեության կայուն վայրի պահպանումը՝ բացառապես «ա» եւ «բ» ենթակետերում նշված գործունեությունն իրականացնելու նպատակով՝ ցանկացած համակցությամբ՝

պայմանով, որ այդպիսի գործունեությունը, կամ «գ» ենթակետի դեպքում՝

գործունեության կայուն վայրի ընդհանուր գործունեությունը կրի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

Տարբերակ Բ

3. Չնայած Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթներին, որոնցով սահմանվում է «մշտական հաստատություն» եզրույթը, «մշտական հաստատություն» եզրույթը չի ներառում՝

- ա) գործունեության այն տեսակները, որոնք Կարգավորող հարկային համաձայնագրում (նախքան սույն կոնվենցիայով կատարված փոփոխությունները) առանձին թվարկված են որպես գործունեության այնպիսի տեսակներ, որոնց իրականացումը մշտական հաստատության ձեւավորում չի ենթադրում՝ անկախ այն հանգամանքից՝ մշտական հաստատության կարգավիճակից այդ բացառությունը պայմանավորված է նախապատրաստական կամ օժանդակ բնույթ ունեցող գործունեությամբ, թե՛ ոչ, բացառությամբ այն դեպքերի, երբ Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթով հստակ սահմանված է, որ գործունեության տվյալ տեսակի իրականացումը չպետք է ենթադրի մշտական հաստատության ձեւավորում՝ պայմանով, որ գործունեությունը կրի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ,
- բ) գործունեության կայուն վայրի պահպանումը՝ ձեռնարկության համար բացառապես «ա» ենթակետում չնշված ցանկացած գործունեություն իրականացնելու նպատակով՝ պայմանով, որ այդ գործունեությունը կրի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ,
- գ) գործունեության կայուն վայրի պահպանումը՝ բացառապես «ա» եւ «բ» ենթակետերում նշված գործունեությունն իրականացնելու նպատակով՝ ցանկացած համակցությամբ՝ պայմանով, որ այդ համակցության արդյունքում առաջացած՝ գործունեության կայուն վայրի ընդհանուր գործունեությունը կրի նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:

4. Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթը (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել 2-րդ կամ 3-րդ կետերով), որում թվարկվում են մշտական հաստատության ձեւավորում չենթադրող գործունեության առանձին տեսակները, չի կիրառվում գործունեության այն կայուն վայրի նկատմամբ, որն օգտագործվում կամ պահպանվում է ձեռնարկության կողմից, եթե այդ նույն ձեռնարկությունը կամ

սերտորեն փոխկապակցված այլ ձեռնարկություն ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ նույն վայրում կամ այդ նույն Պայմանավորվող երկրի մեկ այլ վայրում, եւ

- ա) այդ վայրը կամ մեկ այլ վայր համարվում է այդ ձեռնարկության կամ դրա հետ սերտորեն փոխկապակցված այլ ձեռնարկության մշտական հաստատություն՝ համաձայն Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների, որոնցով սահմանվում է մշտական հաստատությունը, կամ
- բ) միեւնույն վայրում երկու ձեռնարկությունների կամ այդ նույն ձեռնարկության կամ դրան սերտորեն փոխկապակցված այլ ձեռնարկության կողմից երկու տարբեր վայրերում իրականացված գործունեության տեսակների համակցման արդյունքում առաջացած ընդհանուր գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթ չի կրում՝

պայմանով, որ երկու ձեռնարկությունների կողմից միեւնույն վայրում կամ այդ նույն ձեռնարկության կամ դրան սերտորեն փոխկապակցված այլ ձեռնարկության կողմից երկու վայրերում իրականացվող գործունեության տեսակները համարվում են փոխլրացնող գործառույթներ, որոնք ընդհանուր բիզնես գործընթացի մաս են կազմում:

- 5. ա) 2-րդ կամ 3-րդ կետերը կիրառվում են Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների այն համապատասխան մասերի փոխարեն, որոնցում թվարկված են մշտական հաստատության ձեւավորում չենթադրող գործունեության առանձին տեսակները, եթե նույնիսկ գործունեությունն իրականացվում է գործունեության կայուն վայրի միջոցով (կամ Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն, որոնք համադրելի են):
 - բ) 4-րդ կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների նկատմամբ (այնպես, ինչպես դրանք կարող են փոփոխվել 2-րդ կամ 3-րդ կետերով), որոնցում թվարկված են մշտական հաստատության ձեւավորում չենթադրող գործունեության առանձին տեսակները, եթե նույնիսկ գործունեությունն իրականացվում է կայուն վայրի միջոցով (կամ Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների նկատմամբ, որոնք համադրելի են):
6. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝
- ա) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային

համաձայնագրերի նկատմամբ,

- բ) 2-րդ կետը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնցում հստակորեն սահմանվում է, որ առանձին գործունեության տեսակների իրականացումը չի ենթադրում մշտական հաստատության ձեավորում, եթե գործունեության տեսակներից յուրաքանչյուրը կրում է նախապատրաստական կամ օժանդակ բնույթ,
- գ) 4-րդ կետը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ:

7. Յուրաքանչյուր Կողմ, որը կիրառում է 1-ին կետում նշված տարբերակը, պետք է Ավանդապահին ծանուցի տարբերակի իր որոշման մասին: Այդպիսի ծանուցումը պետք է նաեւ ներառի 5-րդ կետի «ա» ենթակետում սահմանված դրույթը պարունակող իր Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկը, ինչպես նաեւ այդպիսի յուրաքանչյուր դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի նկատմամբ որեւէ տարբերակ կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրները որոշել են կիրառել այդ նույն տարբերակը եւ այդ դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացրել:

8. Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 6-րդ կետի «ա» կամ «գ» ենթակետում նշված վերապահումը եւ չի որոշում կիրառել 1-ին կետում նշված տարբերակը, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 5-րդ կետի «բ» ենթակետում նշված դրույթը, ինչպես նաեւ յուրաքանչյուր այդպիսի դրույթ պարունակող հոդվածի եւ կետի մասին: 4-րդ կետը Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի նկատմամբ կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրներն այդ դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացրել սույն կետի կամ 7-րդ կետի համաձայն:

Հոդված 14. Պայմանագրերի բաժանումը

1. Բացառապես պարզելու համար, թե արդյոք խախտվել է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթում նշված ժամկետը (կամ ժամկետները), որով սահմանվում է այն ժամանակահատվածը (կամ ժամանակահատվածները), որից հետո կոնկրետ ծրագրեր կամ գործունեության տեսակներ համարվում են մշտական հաստատություն՝

- ա) այն դեպքում, երբ Պայմանավորվող երկրի ձեռնարկությունը

գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող երկրում գտնվող այնպիսի վայրում, որը համարվում է շինարարական հրապարակի, կառուցման ծրագրի, տեղակայման ծրագրի կամ այլ կոնկրետ ծրագրի մաս, որը սահմանվում է Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթի մեջ, կամ այդպիսի վայրի հետ կապված՝ իրականացնում է վերահսկողական կամ խորհրդատվական գործունեություն, եթե Կարգավորող հարկային համաձայնագրում այդպիսի գործունեության վերաբերյալ առկա է դրույթ, եւ գործունեության այդ տեսակներն իրականացվում են մեկ կամ ավելի ժամկետներում, որոնց հանրագումարը գերազանցում է երեսնօրյա ժամկետը՝ չգերազանցելով Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթում նշված ժամկետը կամ ժամկետները, եւ

- բ) եթե փոխկապված գործունեության տեսակներն իրականացվում են առաջին ձեռնարկության հետ սերտորեն փոխկապակցված մեկ կամ մեկից ավելի ձեռնարկությունների կողմից այդ մյուս Պայմանավորվող երկրում գտնվող նույն շինարարական հրապարակում, կառուցման կամ տեղակայման ծրագրով կամ Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթով սահմանված այլ վայրում (կամ եթե Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթը վերաբերում է դրա հետ կապված վերահսկողական կամ խորհրդատվական գործունեությանը) տարբեր ժամանակահատվածներում, որոնցից յուրաքանչյուրը գերազանցում է երեսնօրյա ժամկետը,

այդ տարբեր ժամանակահատվածներն ավելացվում են ընդհանուր ժամանակահատվածին, որի ընթացքում առաջին ձեռնարկությունը գործունեություն է իրականացրել այդ շինարարական հրապարակում, կառուցման կամ տեղակայման ծրագրով կամ Կարգավորող հարկային համաձայնագրի համապատասխան դրույթով սահմանված այլ վայրում:

2. 1-ին կետը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, եթե այդ դրույթները վերաբերում են պայմանագրերը մի քանի մասերի բաժանելուն՝ 1-ին կետում նշված կոնկրետ ծրագրերի կամ գործունեության տեսակների համար մշտական հաստատության առկայության հետ կապված ժամկետի կամ ժամկետների կիրառումից խուսափելու նպատակով:

3. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝
- ա) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ,
 - բ) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի դրույթների նկատմամբ, որոնք վերաբերում են բնական ռեսուրսների հետազոտմանը կամ շահագործմանը:

4. Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 3-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ վերապահում, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 2-րդ կետում սահմանված դրույթը, որը ենթակա չէ 3-րդ կետի «բ» ենթակետերով նախատեսված վերապահման, եւ եթե կատարել է այդպիսի վերապահում, ապա ծանուցում է յուրաքանչյուր այդպիսի դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: Այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի մասով, այդ դրույթը փոխարինվում է 1-ին կետի դրույթներով այնքանով, որքանով նախատեսված է 2-րդ կետով: Մյուս դեպքերում 1-ին կետը փոխարինում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին միայն այնքանով, որքանով այդ դրույթներն անհամատեղելի են 1-ին կետի հետ:

Հոդված 15. Ճեռնարկության հետ սերտորեն փոխկապակցված անձի սահմանումը

1. Կարգավորող հարկային համաձայնագրի 12-րդ հոդվածի (Կոմիսիոների միջոցով գործարքների կնքման եւ համանման ռազմավարության միջոցով մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 2-րդ կետով, 13-րդ հոդվածի (Գործունեության որոշակի տեսակների համար սահմանված բացառությունների կիրառմամբ մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 4-րդ կետով կամ 14-րդ հոդվածի (Պայմանագրերի բաժանումը) 1-ին կետով փոփոխված դրույթների իմաստով անձը համարվում է ճեռնարկության հետ սերտորեն փոխկապակցված, եթե հիմք ընդունելով բոլոր համապատասխան փաստերը եւ հանգամանքները՝ մեկը վերահսկում է մյուսին, կամ երկուսն էլ վերահսկվում են միեւնոյն անձի կամ ճեռնարկության կողմից: Անձը ցանկացած դեպքում համարվում է ճեռնարկության հետ սերտորեն փոխկապակցված, եթե անձի ուղղակի կամ անուղղակի մասնակցության բենեֆիցիար մասնաբաժինը մյուս ճեռնարկությունում կազմում է 50 տոկոսից ավելին (կամ ընկերության դեպքում՝ ընկերության՝ ձայնի իրավունք

տվող բաժնեմասերի ընդհանուր թվի եւ արժեքի կամ ընկերությունում բաժնեմասերի ձեռով բենեֆիցիար մասնակցության 50 տոկոսից ավելին), կամ եթե այլ անձի ուղղակի կամ անուղղակի մասնակցության բենեֆիցիար մասնաբաժինն այլ անձում կամ ձեռնարկությունում կազմում է 50 տոկոսից ավելին (կամ ընկերության դեպքում՝ ընկերության՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի ընդհանուր թվի եւ արժեքի կամ ընկերության բաժնետիրական կապիտալի 50 տոկոսից ավելին):

2. Այն Կողմը, որն արել է 12-րդ հոդվածի (Կոմիսիոների միջոցով գործարքների կնքման եւ համանման ռազմավարության միջոցով մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 4-րդ կետի, 13-րդ հոդվածի (Գործունեության որոշակի տեսակների համար սահմանված բացառությունների կիրառմամբ մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 6-րդ կետի «ա» կամ «գ» ենթակետերի եւ 14-րդ հոդվածի (Պայմանագրերի բաժանումը) 3-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ վերապահում, կարող է իրեն իրավունք վերապահել սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվում են այդ վերապահումները:

ՄԱՍ V

ՎԵՃԵՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Հոդված 16. Փոխհամաձայնեցման ընթացակարգը

1. Եթե անձը համարում է, որ Պայմանավորվող երկրներից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն իր՝ Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման, ապա նա կարող է, անկախ այդ Պայմանավորվող երկրների ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից, գործը ներկայացնել երկու Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի իրավասու մարմին: Գործը պետք է ներկայացվի Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման հանգեցնող գործողության վերաբերյալ առաջին անգամ ծանուցելուց հետո երեք տարվա ընթացքում:

2. Այն դեպքում, երբ առարկությունը հիմնավորված է, եւ եթե իրավասու մարմինն ինքնուրույն չի կարող բավարարող լուծման հանգեւ, այդ իրավասու մարմինը միջոցներ է ձեռնարկում մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմնի հետ փոխադարձ համաձայնությամբ գործը լուծելու համար՝ նպատակ ունենալով խուսափելու Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկումից: Ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է իրականացվի՝ անկախ Պայմանավորվող երկրների ներպետական օրենսդրությամբ նախատեսված ժամկետներից:

3. Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները պետք է միջոցներ ձեռնարկեն Կարգավորող հարկային համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման հետ կապված ցանկացած դժվարություն կամ անորոշություն փոխադարձ համաձայնությամբ լուծելու նպատակով: Նրանք կարող են նաեւ միմյանց հետ խորհրդակցել՝ վերացնելու համար կրկնակի հարկումն այն դեպքերում, երբ դրանք նախատեսված չեն Կարգավորող հարկային համաձայնագրով:

4. ա) i) 1-ին կետի առաջին նախադասությունը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների (կամ դրանց մասերի) փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, որոնցով նախատեսված է, որ եթե անձը համարում է, որ

Պայմանավորվող երկրներից մեկի կամ երկուսի գործողություններն իր համար հանգեցնում են կամ կհանգեցնեն Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման, ապա ինքը կարող է, անկախ այդ Պայմանավորվող երկրների ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից, գործը ներկայացնել այն Պայմանավորվող երկրի իրավասու մարմին, որի ռեզիդենտն է ինքը, այդ թվում՝ այն դրույթներին համապատասխան, որոնց համաձայն, եթե տվյալ անձի կողմից ներկայացված գործը համապատասխանում է Կարգավորող հարկային համաձայնագրի՝ ազգության հիմքով խտրականության բացակայության վերաբերյալ դրույթներին, ապա գործը կարող է ներկայացվել այն Պայմանավորվող երկրի իրավասու մարմին, որի ռեզիդենտն է տվյալ անձը:

- ii) 1-ին կետի երկրորդ նախադասությունը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն, որոնցով նախատեսվում է, որ 1-ին կետի առաջին նախադասության մեջ նշված գործը պետք է ներկայացվի որոշակի ժամկետում, որն ավելի կարճ է, քան Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման հանգեցնող գործողության վերաբերյալ առաջին անգամ ծանուցելուց հետո երեք տարվա ժամանակահատվածը, կամ Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթի բացակայության դեպքում, որով սահմանվում է գործը ներկայացնելու համար նախատեսված ժամկետը:
- բ) i) 2-րդ կետի առաջին նախադասությունը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների բացակայության դեպքում, որոնց համաձայն՝ այն իրավասու մարմինը, որին 1-ին կետում նշված անձը ներկայացրել է գործը, պարտավոր է այն դեպքում, երբ առարկությունը հիմնավորված է, եւ երբ այդ իրավասու մարմինն ինքնուրույն չի կարող բավարարող լուծման հանգել, միջոցներ ձեռնարկել մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմնի հետ գործը փոխադարձ համաձայնությամբ լուծելու համար՝ նպատակ ունենալով խուսափել Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկումից:

- ii) 2-րդ կետի երկրորդ նախադասությունը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների բացակայության դեպքում, որոնցով նախատեսվում է, որ ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է իրագործվի՝ անկախ Պայմանավորվող երկրների ներպետական օրենսդրությամբ նախատեսված ժամկետներից:
- գ) i) 3-րդ կետի առաջին նախադասությունը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների բացակայության դեպքում, որոնցով նախատեսվում է, որ Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները պետք է ձգտեն փոխադարձ համաձայնությամբ կարգավորման հասնել Կարգավորող հարկային համաձայնագրի մեկնաբանության կամ կիրառման հետ կապված ցանկացած դժվարության կամ անորոշության առնչությամբ:
- ii) 3-րդ կետի երկրորդ նախադասությունը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների բացակայության դեպքում, որոնցով նախատեսվում է, որ Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները կարող են նաեւ խորհրդակցել միմյանց հետ՝ վերացնելու համար կրկնակի հարկումն այն դեպքերում, երբ դա նախատեսված չէ Կարգավորող հարկային համաձայնագրով:
5. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝
- ա) 1-ին կետի առաջին նախադասությունը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ՝ ելնելով այն հանգամանքից, որ այն նպատակ է հետապնդում բավարարելու ՏՀԶԿ/Մեծ քսանյակի ԲԽՇՏ փաթեթով սահմանված՝ վեճերի լուծման գործընթացի բարելավման նվազագույն չափանիշը՝ ապահովելով, որ իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրով (բացի Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթից, որով անձին թույլատրվում է գործը ներկայացնել Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի իրավասու մարմին), նախատեսվի, որ եթե անձը համարում է, որ Պայմանավորվող երկրներից մեկի կամ երկուսի գործողություններն իր համար հանգեցնում են կամ կհանգեցնեն Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման, ապա նա կարող է, անկախ այդ Պայմանավորվող երկրների ներպետական օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության

միջոցներից, գործը ներկայացնել այն Պայմանավորվող երկրի իրավասու մարմին, որի ռեզիդենտ է ինքը, կամ եթե տվյալ անձի կողմից ներկայացված գործը համապատասխանում է Կարգավորող հարկային համաձայնագրի՝ ազգության հիմքով խտրականության բացակայության վերաբերյալ դրույթներին, ապա գործը կարող է ներկայացվել այն Պայմանավորվող երկրի իրավասու մարմին, որի ռեզիդենտ է տվյալ անձը. իսկ այդ Պայմանավորվող երկրի իրավասու մարմինը պետք է երկկողմանի ծանուցման կամ խորհրդատվության գործընթաց իրականացնի մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմնի հետ այն գործերի հետ կապված, որոնցով այն իրավասու մարմինը, որին ներկայացվել էր փոխհամաձայնեցման ընթացակարգ ներառող գործը, հարկատուի առարկությունն արդարացված չի համարում,

- բ) 1-ին կետի երկրորդ նախադասությունը չկիրառելու իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնցով նախատեսված չէ, որ 1-ին կետի առաջին նախադասության մեջ նշված գործը պետք է ներկայացվի որոշակի ժամկետում՝ ելնելով այն հանգամանքից, որ դրանով նպատակ է հետապնդվում բավարարելու ՏՀԶԿ/Մեծ քսանյակի ԲԽՇՏ փաթեթով սահմանված՝ վեճերի լուծման գործընթացի բարելավման նվազագույն չափանիշը, որպեսզի ապահովվի այն դրույթի կատարումը, որի համաձայն այդպիսի բոլոր Կարգավորող հարկային համաձայնագրերի նպատակներով 1-ին կետում նշված հարկատուին թույլատրվում է գործը ներկայացնել Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման հանգեցնող գործողության վերաբերյալ առաջին անգամ ծանուցելուց հետո առնվազն եռամյա ժամկետում,
- գ) 2-րդ կետի երկրորդ նախադասությունը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ՝ ելնելով այն հանգամանքից, որ իր բոլոր Կարգավորող հարկային համաձայնագրերի նպատակներով՝
 - i) փոխհամաձայնեցման ընթացակարգով ձեռք բերված ցանկացած համաձայնություն պետք է իրականացվի՝ անկախ Պայմանավորվող երկրների ներպետական օրենսդրությամբ սահմանված ժամկետներից, կամ
 - ii) պետք է բավարարվի ՏՀԶԿ/Մեծ քսանյակի ԲԽՇՏ փաթեթով սահմանված՝ վեճերի լուծման գործընթացի բարելավման նվազագույն չափանիշը՝ իր երկկողմ համաձայնագրերի շուրջ բանակցությունների ժամանակ ընդունելով այնպիսի դրույթ, ինչը

կնախատեսի, որ՝

Ա) Պայմանավորվող երկրները չեն կարող կատարել Պայմանավորվող երկրներից մեկի ձեռնարկության մշտական հաստատությանը վերագրվող շահույթների ճշգրտումներ այն ժամանակահատվածից հետո, որը սահմանվել է երկու Պայմանավորվող երկրների փոխադարձ համաձայնությամբ այն հարկային տարվա վերջում, որում շահույթը հնարավոր կլիներ վերագրել մշտական հաստատությանը (սույն դրույթը չի կիրառվում խարդախության, հանցավոր անփութության կամ պարտականությունները դիտավորությամբ չկատարելու դեպքում), եւ

Բ) Պայմանավորվող երկրները չեն կարող ձեռնարկության շահույթում ընդգրկել եւ համապատասխանաբար հարկել այն շահույթները, որոնք ձեռնարկությունը կստանար, սակայն չի ստացել Կարգավորող հարկային համաձայնագրերի՝ փոխկապակցված ձեռնարկություններին առնչվող դրույթում նշված պայմանների պատճառով այն ժամանակահատվածից հետո, որը սահմանվել է երկու Պայմանավորվող երկրների միջեւ ձեռք բերված փոխադարձ համաձայնությամբ այն հարկային տարվա վերջում, որում ձեռնարկությունը կստանար շահույթները (սույն դրույթը չի կիրառվում խարդախության, հանցավոր անփութության կամ պարտականությունները դիտավորությամբ չկատարելու դեպքում):

6. ա) Յուրաքանչյուր Կողմ, որը չի կատարել 5-րդ կետի «ա» ենթակետի վերաբերյալ վերապահում, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 4-րդ կետի «ա» ենթակետի i պարբերությամբ սահմանված դրույթ, իսկ եթե կատարել է այդպիսի վերապահում, ապա ծանուցում է յուրաքանչյուր այդպիսի դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: Այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրները ծանուցում են ներկայացրել Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի վերաբերյալ, այդ դրույթը փոխարինվում է 1-ին կետի առաջին նախադասությամբ: Մյուս դեպքերում 1-ին կետի առաջին նախադասությունը փոխարինում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին միայն այնքանով, որքանով այդ դրույթներն անհամատեղելի են այդ նախադասության հետ:

- բ) Յուրաքանչյուր Կողմ, որը 5-րդ կետի «բ» ենթակետի վերաբերյալ վերապահում չի արել, Ավանդապահին ծանուցում է՝
- i) իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի մասին, որոնք պարունակում են այնպիսի դրույթ, որով նախատեսված է, որ 1-ին կետի առաջին նախադասության մեջ նշված գործը պետք է ներկայացվի որոշակի ժամկետում, որն ավելի կարճ է, քան Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման հանգեցնող գործողության վերաբերյալ առաջին անգամ ծանուցելուց հետո երեք տարի ժամանակահատվածը, ինչպես նաև այդպիսի յուրաքանչյուր դրույթ պարունակող հոդվածի ու կետի համարը. Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթը փոխարինվում է 1-ին կետի երկրորդ նախադասությամբ, եթե Պայմանավորվող բոլոր երկրներն այդ դրույթի վերաբերյալ ծանուցում են ներկայացրել մյուս բոլոր դեպքերում, ii պարբերության համաձայն, 1-ին կետի երկրորդ նախադասությունը փոխարինում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին միայն այնքանով, որքանով այդ դրույթներն անհամատեղելի են 1-ին կետի երկրորդ նախադասության հետ,
 - ii) իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի մասին, որոնք պարունակում են այնպիսի դրույթ, որով նախատեսված է, որ 1-ին կետի առաջին նախադասության մեջ նշված գործը պետք է ներկայացվի որոշակի ժամկետում, որը կազմում է առնվազն երեք տարի եւ հաշվարկվում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման հանգեցնող գործողության մասին առաջին անգամ ծանուցելու պահից, ինչպես նաև այդպիսի դրույթ պարունակող յուրաքանչյուր հոդվածի ու կետի համարը. 1-ին կետի երկրորդ նախադասությունը չի կիրառվում Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ, եթե որեւէ Պայմանավորվող երկիր, կապված այդ Կարգավորող հարկային համաձայնագրի հետ, այդպիսի ծանուցում է ներկայացրել:
- գ) Յուրաքանչյուր Կողմ Ավանդապահին ծանուցում է՝
- i) իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի մասին, որոնք չեն պարունակում 4-րդ կետի «բ» ենթակետի i պարբերությամբ սահմանված դրույթը. 2-րդ կետի առաջին նախադասությունը

Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ կիրառվում է, եթե Պայմանավորվող բոլոր երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել այդ Կարգավորող հարկային համաձայնագրի վերաբերյալ,

ii) 5-րդ կետի «գ» ենթակետի վերաբերյալ վերապահում չկատարելու դեպքում Կողմի այն Կարգավորող հարկային համաձայնագրերի մասին, որոնք չեն պարունակում 4-րդ կետի «բ» ենթակետի ii պարբերությամբ սահմանված դրույթը. 2-րդ կետի երկրորդ նախադասությունը Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ կիրառվում է, եթե բոլոր Պայմանավորվող երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել այդ Կարգավորող հարկային համաձայնագրի վերաբերյալ:

դ) Յուրաքանչյուր Կողմ Ավանդապահին ծանուցում է՝

i) իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի մասին, որոնք չեն պարունակում 4-րդ կետի «գ» ենթակետի i պարբերությամբ սահմանված դրույթը. 3-րդ կետի առաջին նախադասությունը Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ կիրառվում է, եթե բոլոր Պայմանավորվող երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել այդ Կարգավորող հարկային համաձայնագրի վերաբերյալ,

ii) իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի ցանկի մասին, որոնք չեն պարունակում 4-րդ կետի «գ» ենթակետի i պարբերությամբ սահմանված դրույթը. 3-րդ կետի երկրորդ նախադասությունը Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ կիրառվում է, եթե բոլոր Պայմանավորվող երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել այդ Կարգավորող հարկային համաձայնագրի վերաբերյալ:

Հոդված 17. Համապատասխանության ճշգրտումները

1. Այն դեպքում, երբ Պայմանավորվող երկիրն իր երկրի ձեռնարկության շահույթի մեջ ներառում է համապատասխանաբար հարկում է այնպիսի շահույթներ, որոնց մասով մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկությունից հարկեր են գանձվել այդ մյուս Պայմանավորվող երկրում, եւ այդպիսով ներառված շահույթներն այնպիսի շահույթներ են, որոնք առաջին Պայմանավորվող երկրի

ձեռնարկությունը կունենար, եթե երկու ձեռնարկությունների միջև հարաբերությունները լինեին այնպիսին, ինչպիսիք լինում են անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ մյուս Պայմանավորվող երկիրը պետք է համապատասխան ճշգրտումներ կատարի այդ շահույթների մասով իր տարածքում գանձված հարկի գումարում: Այդպիսի ճշգրտում կատարելու որոշում կայացնելիս հարկ է պատշաճ ուշադրություն դարձնել Կարգավորող հարկային համաձայնագրի այլ դրույթների, իսկ Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններն անհրաժեշտության դեպքում պետք է խորհրդակցեն միմյանց հետ:

2. 1-ին կետը կիրառվում է այն դրույթի փոխարեն կամ բացակայության դեպքում, որով սահմանվում է, որ Պայմանավորվող երկիրը պարտավոր է համապատասխան ճշգրտումներ կատարել իր ձեռնարկության շահույթների մասով իր տարածքում գանձված հարկի գումարում, եթե մյուս Պայմանավորվող երկիրն այդ շահույթը ներառում է այդ մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկության շահույթներում եւ համապատասխանաբար հարկում է այդ շահույթները, եւ այդպիսով ներառված շահույթներն այնպիսի շահույթներ են, որոնք այդ մյուս Պայմանավորվող երկրի ձեռնարկությունը կունենար, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք լինում են անկախ ձեռնարկությունների միջև:

3. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել՝

- ա) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք արդեն իսկ պարունակում են 2-րդ կետում սահմանված դրույթ.
- բ) սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ՝ հիմք ընդունելով այն, որ իր Կարգավորող հարկային համաձայնագրի 2-րդ կետում նշված դրույթի բացակայության դեպքում՝
 - i) ինքը պետք է իրականացնի 1-ին կետում նշված համապատասխան ճշգրտումը, կամ
 - ii) իր իրավասու մարմինը գործին լուծում տալու նպատակով պետք է միջոցներ ձեռնարկի՝ Կարգավորող հարկային համաձայնագրի՝ փոխհամաձայնության ընթացակարգի վերաբերյալ դրույթներին համապատասխան,
- գ) այն դեպքում, երբ Կողմն արել է վերապահում 16-րդ հոդվածի (Փոխհամաձայնության ընթացակարգը) 5-րդ կետի «գ» ենթակետի ii

պարբերության վերաբերյալ, սույն հոդվածն ամբողջությամբ չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ՝ ելնելով այն հանգամանքից, որ իր երկկողմ համաձայնագրերի շուրջ բանակցությունների ժամանակ ինքն ընդունելու է 1-ին կետում ներառված դրույթին համանման պայմանագրային դրույթ՝ պայմանով, որ Պայմանավորվող երկրները համաձայնության գան այդ դրույթի եւ 16-րդ հոդվածի (Փոխհամաձայնության ընթացակարգը) 5-րդ կետի «գ» ենթակետի ii պարբերությամբ սահմանված դրույթների վերաբերյալ:

4. Յուրաքանչյուր Կողմ, որը 3-րդ կետի վերաբերյալ վերապահում չի արել, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը պարունակում է 2-րդ կետում նշված դրույթ, իսկ եթե կատարել է այդպիսի վերապահում, ապա ծանուցում է յուրաքանչյուր այդպիսի դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: Այն դեպքում, երբ բոլոր Պայմանավորվող երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի մասով, ապա այդ դրույթը փոխարինվում է 1-ին կետի դրույթներով: Մյուս դեպքերում 1-ին կետը փոխարինում է Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին միայն այնքանով, որքանով այդ դրույթներն անհամատեղելի են 1-ին կետի հետ:

ՄԱՍ ՎԻ
ԱՐԲԻՏՐԱԺԸ

Հոդված 18. VI մասը կիրառելու ընտրությունը

Կողմը կարող է որոշել կիրառել սույն մասն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ եւ համապատասխանաբար Ավանդապահին ծանուցում է այդ մասին: Երկու Պայմանավորվող երկրների համար սույն մասը կիրառվում է Կարգավորող հարկային համաձայնագրի մասով միայն այն դեպքում, երբ երկու Պայմանավորվող երկրներն էլ այդ մասին ծանուցում են ուղարկել:

Հոդված 19. Պարտադիր ուժ ունեցող արբիտրաժը

1. Այն դեպքում, երբ՝

- ա) Կարգավորող հարկային համաձայնագրի (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել 16-րդ հոդվածի (Փոխհամաձայնության ընթացակարգ) 1-ին կետով) դրույթի համաձայն, որով նախատեսվում է, որ անձը կարող է գործը ներկայացնել Պայմանավորվող երկրի իրավասու մարմին, եթե այդ անձը գտնում է, որ Պայմանավորվող երկրներից մեկի կամ երկուսի գործողություններն իր համար հանգեցնում են կամ կհանգեցնեն Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել Կոնվենցիայով) ոչ համապատասխան հարկման, եւ անձը գործը ներկայացրել է Պայմանավորվող երկրի իրավասու մարմին այն հիմքով, որ Պայմանավորվող երկրներից մեկի կամ երկուսի գործողություններն իր համար հանգեցրել են Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներին ոչ համապատասխան հարկման (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել Կոնվենցիայով), եւ
- բ) իրավասու մարմինները համաձայնության չեն գալիս այդ հարցը Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթներին համապատասխան (այնպես, ինչպես այն կարող է փոփոխվել 16-րդ հոդվածի (Փոխհամաձայնության ընթացակարգ) 2-րդ կետով) լուծելու հարցում, որոնցով նախատեսվում է, որ իրավասու մարմինը միջոցներ է ձեռնարկում մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմնի հետ

փոխադարձ համաձայնությամբ գործին լուծում տալու համար՝ 8-րդ կամ 9-րդ կետով սահմանված մեկնարկի օրվանից սկսած երկու տարվա ընթացքում՝ հանգամանքներով պայմանավորված (եթե մինչեւ այդ ժամկետը լրանալը Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններն այդ գործի հետ կապված այլ ժամկետի վերաբերյալ համաձայնության չեն եկել եւ այդ համաձայնության մասին չեն ծանուցել գործը ներկայացրած անձին),

անձի գրավոր պահանջի դեպքում գործից բխող չլուծված ցանկացած հարց սույն մասով սահմանված կարգով փոխանցվում է արբիտրաժային դատարան 10-րդ կետի դրույթներին համապատասխան՝ Պայմանավորվող երկրների իրավասու մարմինների կողմից համաձայնեցված կանոնների կամ ընթացակարգերի համաձայն:

2. Այն դեպքում, երբ իրավասու մարմինը կասեցրել է 1-ին կետում նշված փոխհամաձայնեցման ընթացակարգը մեկ կամ ավելի նույն հարցերով գործը դատարանում կամ վարչական տրիբունալում քննվելու պատճառով, 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ժամկետը կդադարի հոսել այնքան ժամանակ, քանի դեռ դատարանը կամ վարչական տրիբունալը վերջնական վճիռ չի կայացրել, կամ գործը չի կասեցվել կամ կարճվել: Ավելին, եթե գործը ներկայացրած անձը եւ իրավասու մարմինը համաձայնության են եկել փոխհամաձայնեցման ընթացակարգը կասեցնելու հարցում, ապա 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ժամկետը կդադարի հոսել մինչեւ կասեցումը չեղյալ հայտարարելը:

3. Այն դեպքում, երբ երկու իրավասու մարմինները համաձայնում են, որ գործով անմիջականորեն շահագրգռված անձը ժամանակին չի ներկայացրել 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված ժամկետի մեկնարկից հետո իրավասու մարմիններից որեւէ մեկի կողմից լրացուցիչ պահանջված որեւէ էական տեղեկություն, ապա 1-ին կետի «բ» ենթակետով սահմանված ժամկետը հետաձգվում է տեղեկությունը պահանջելու օրվանից հաշվարկվող եւ տեղեկատվություն տրամադրելու օրով ավարտվող ժամկետին հավասար ժամանակահատվածով:

4. ա) Արբիտրաժային դատարան ներկայացված հարցերի վերաբերյալ արբիտրաժային դատարանի վճիռը փոխադարձ համաձայնությամբ ենթակա է կատարման 1-ին կետում նշված գործով: Արբիտրաժային դատարանի վճիռը վերջնական է:
- բ) Արբիտրաժային դատարանի վճիռը պարտադիր է երկու Պայմանավորվող երկրների համար՝ բացառությամբ հետեւյալ դեպքերի.

- i) այն դեպքում, երբ գործով անմիջականորեն շահագրգռված անձը չի ընդունում արբիտրաժային դատարանի վճռի կատարումն ապահովող փոխադարձ համաձայնությունը: Այս դեպքում գործը ենթակա չէ հետագա քննման իրավասու մարմինների կողմից: Գործի վերաբերյալ արբիտրաժային դատարանի վճռի կատարումն ապահովող փոխադարձ համաձայնությունը համարվում է գործով անմիջականորեն շահագրգռված անձի կողմից չընդունված, եթե գործով անմիջականորեն շահագրգռված անձը փոխադարձ համաձայնության մասին ծանուցումն իրեն ուղարկելու օրվան հաջորդող 60 օրվա ընթացքում արբիտրաժային դատարանի վճռի կատարումն ապահովող փոխադարձ համաձայնությամբ լուծում ստացած բոլոր հարցերը հետ չի վերցնում որեւէ դատարանի կամ վարչական տրիբունալի քննությունից կամ որեւէ այլ կերպ հիմքեր չի տրամադրում՝ դադարեցնելու համար այդ հարցերի մասով դատարանի կամ վարչական տրիբունալի վարույթում գտնվող գործի ընթացիկ քննությունը՝ այդ փոխադարձ համաձայնությանը համապատասխան կարգով:
- ii) այն դեպքում, երբ Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի դատարանները վերջնական վճռում հանգում են այն եզրակացության, որ արբիտրաժային դատարանի վճիռն անվավեր է: Այս դեպքում 1-ին կետում սահմանված՝ արբիտրաժի վերաբերյալ դիմումը համարվում է չներկայացված, եւ արբիտրաժային գործընթացը համարվում է չկայացած (բացառությամբ 21-րդ (Արբիտրաժային վարույթի գաղտնիությունը) եւ 25-րդ հոդվածների (Արբիտրաժային վարույթի հետ կապված ծախսերը) նպատակների): Այս դեպքում արբիտրաժի վերաբերյալ կարելի է ներկայացնել նոր դիմում, եթե իրավասու մարմիններն այդպիսի նոր դիմումի ներկայացումը չթույլատրելու վերաբերյալ համաձայնության չեն գալիս:
- iii) այն դեպքում, երբ գործի լուծման արդյունքում դրա հետեւանքներն անմիջականորեն կրող անձը դատարան է դիմում այն հարցերով, որոնք լուծվել են որեւէ դատարանում կամ վարչական տրիբունալում՝ արբիտրաժային դատարանի վճռի կատարումն ապահովող փոխադարձ համաձայնությամբ:

5. 1-ին կետի «ա» ենթակետում սահմանված կարգով փոխհամաձայնեցման ընթացակարգի վերաբերյալ սկզբնական դիմումն ստացած իրավասու մարմինը

դիմումն ստանալուց հետո՝ երկու օրացուցային ամսվա ընթացքում՝

ա) գործը ներկայացրած անձին ուղարկում է ծանուցում այն մասին, որ ինքը ստացել է դիմումը, եւ

բ) այդ դիմումն ստանալու վերաբերյալ ծանուցման հետ միասին մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմին է ուղարկում դիմումի օրինակը:

6. Իրավասու մարմնի կողմից փոխհամաձայնեցման ընթացակարգի վերաբերյալ դիմումը (կամ մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմնից դրա օրինակը) ստանալուց հետո՝ երեք օրացուցային ամսվա ընթացքում, իրավասու մարմինը՝

ա) կա՛մ ծանուցում է ուղարկում գործը ներկայացրած անձին եւ մյուս իրավասու մարմին այն մասին, որ ինքն ստացել է գործն ըստ էության քննելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը, կա՛մ

բ) այդ նպատակով տվյալ անձից պահանջում է լրացուցիչ տեղեկատվություն:

7. Այն դեպքում, երբ 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն իրավասու մարմիններից մեկը կամ երկուսն էլ գործը ներկայացրած անձից պահանջում են գործն ըստ էության քննելու համար անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն, լրացուցիչ տեղեկատվություն պահանջած իրավասու մարմինն այդ անձից լրացուցիչ տեղեկատվություն ստանալուց հետո՝ երեք օրացուցային ամսվա ընթացքում, այդ անձին եւ մյուս իրավասու մարմնին կա՛մ ծանուցում է այն մասին,

ա) որ ինքը ստացել է պահանջվող տեղեկատվությունը, կա՛մ

բ) որ պահանջվող տեղեկատվության որոշ մասը դեռեւս բացակայում է:

8. Եթե իրավասու մարմիններից եւ ոչ մեկը 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն չի պահանջել լրացուցիչ տեղեկատվություն, ապա 1-ին կետում նշված մեկնարկի օր է համարվում հետեւյալ օրերից ավելի վաղը.

ա) այն օրը, երբ երկու իրավասու մարմինները, 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն, ծանուցել են գործը ներկայացրած անձին, եւ

բ) 5-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մյուս Պայմանավորվող երկրի իրավասու մարմնին ծանուցելուց հետո երեք օրացուցային ամսվան

հաջորդող օրը:

9. Այն դեպքում, երբ 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն պահանջվել է լրացուցիչ տեղեկատվություն, ապա 1-ին կետում նշված մեկնարկի օր է համարվում հետեւյալ օրերից ավելի վաղը.

- ա) 7-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ գործը ներկայացրած անձին եւ մյուս իրավասու մարմին լրացուցիչ տեղեկատվություն պահանջելու մասին ծանուցելու վերջին օրը, եւ
- բ) իրավասու մարմիններից որեւէ մեկի կողմից պահանջված ամբողջ տեղեկատվությունը գործը ներկայացրած անձից ստանալուց հետո երեք օրացուցային ամսվան հաջորդող օրը:

Սակայն, եթե իրավասու մարմիններից մեկը կամ երկուսն էլ ուղարկում են 7-րդ կետի «բ» ենթակետում նշված ծանուցումը, ապա այդպիսի ծանուցումը, 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, համարվում է լրացուցիչ տեղեկատվություն ստանալու մասին պահանջ:

10. Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնությամբ (համապատասխան Կարգավորող հարկային համաձայնագրի՝ փոխհամաձայնեցման ընթացակարգերի վերաբերյալ հողվածի համաձայն) որոշում են սույն մասում առկա դրույթների կիրառման եղանակը, այդ թվում՝ յուրաքանչյուր իրավասու մարմնի կողմից գործի՝ ըստ էության քննության համար անհրաժեշտ նվազագույն տեղեկատվության շրջանակը: Այդպիսի համաձայնությունը ձեռք է բերվում նախքան այն օրը, երբ գործում առկա չլուծված հարցերը կարող են առաջին անգամ փոխանցվել արբիտրաժին եւ այնուհետեւ կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել:

11. Սույն հողվածն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ կիրառելու նպատակներով Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել 1-ին կետի «բ» ենթակետում սահմանված երկամյա ժամկետը փոխարինելու եռամյա ժամկետով:

12. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել հետեւյալ կանոնները կիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ՝ չնայած սույն հողվածի մյուս դրույթներին.

- ա) սույն կոնվենցիայով նախատեսված՝ այլ հանգամանքներում արբիտրաժային գործընթացի շրջանակներում քննվող փոխհամաձայնեցման ընթացակարգից բխող ցանկացած չլուծված հարց չի փոխանցվում արբիտրաժին, եթե Պայմանավորվող երկրներից որեւէ

մեկի դատարանը կամ վարչական տրիբունալն այդ հարցի վերաբերյալ արդեն իսկ որոշում է կայացրել,

- բ) եթե արբիտրաժի վերաբերյալ դիմումը ներկայացնելուց հետո եւ արբիտրների խմբի կողմից Պայմանավորվող երկրի իրավասու մարմիններին վճիռը փոխանցելուց առաջ՝ ցանկացած ժամանակ, Պայմանավորվող երկրներից մեկի դատարանը կամ վարչական տրիբունալը հարցի վերաբերյալ որոշում է կայացնում, ապա արբիտրաժային գործընթացը դադարեցվում է:

Հոդված 20. Արբիտրների նշանակումը

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնության են գալիս այլ կանոնների վերաբերյալ, սույն մասի նպատակներով կիրառվում են 2-4-րդ կետերը:

2. Հետեւյալ կանոններով կարգավորվում է արբիտրաժային տրիբունալի անդամների նշանակումը.

- ա) Արբիտրաժային տրիբունալը բաղկացած է երեք առանձին անդամներից, որոնք միջազգային հարկային հարցերի ոլորտում ունեն մասնագիտական գիտելիքներ կամ փորձ:
- բ) Իրավասու մարմիններից յուրաքանչյուրը, 19-րդ հոդվածի (Պարտադիր ուժ ունեցող արբիտրաժ) 1-ին կետի համաձայն, արբիտրաժի վերաբերյալ դիմումն ստանալու օրվանից 60 օրվա ընթացքում նշանակում է արբիտրաժային տրիբունալի մեկ անդամ: Տրիբունալի՝ այդ կերպ նշանակված երկու անդամներն իրենց նշանակումից հետո՝ 60 օրվա ընթացքում, նշանակում են երրորդ արբիտրին, որը գործում է որպես արբիտրաժային տրիբունալի նախագահող: Նախագահողը Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի քաղաքացի կամ ռեզիդենտ չի կարող լինել:
- գ) Արբիտրաժային տրիբունալի կազմում նշանակված յուրաքանչյուր անդամ պետք է լինի անաչառ եւ նշանակումն ընդունելու պահին պետք է անկախ լինի Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններից, հարկային մարմիններից, ֆինանսների նախարարություններից եւ գործով անմիջականորեն շահագրգռված բոլոր անձանցից (ինչպես նաեւ նրանց խորհրդականներից), պահի իր անաչառությունն ու անկախությունը վարույթի ողջ ընթացքում եւ դրանից հետո՝ ողջամիտ

ժամանակահատվածում, պետք է խուսափի այնպիսի վարքագծի դրսևորումից, որը կարող է խաթարել արբիտրների անաչառ եւ անկախ երեւալը՝ կապված վարույթի հետ:

3. Այն դեպքում, երբ Պայմանավորվող երկրի իրավասու մարմինը չի նշանակում արբիտրաժային տրիբունալի անդամ 2-րդ կետով սահմանված կամ Պայմանավորվող երկրների իրավասու մարմինների կողմից համաձայնեցված կարգով եւ ժամկետներում, ապա իրավասու մարմնի անունից անդամ է նշանակում Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության հարկային քաղաքականության եւ վարչարարության կենտրոնի բարձրաստիճան պաշտոնյան, որը Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի քաղաքացի չէ:

4. Եթե արբիտրաժային տրիբունալի՝ առաջինը նշանակված երկու անդամները չեն նշանակում նախագահողին 2-րդ կետով սահմանված կամ Պայմանավորվող երկրների իրավասու մարմինների կողմից համաձայնեցված կարգով եւ ժամկետներում, ապա նախագահող է նշանակում Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության հարկային քաղաքականության եւ վարչարարության կենտրոնի բարձրաստիճան պաշտոնյան, որը Պայմանավորվող երկրներից որեւէ մեկի քաղաքացի չէ:

Հոդված 21. Արբիտրաժային վարույթի գաղտնիությունը

1. Բացառապես սույն մասի դրույթների եւ համապատասխան Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների ու Պայմանավորվող երկրների՝ տեղեկատվության փոխանակման, գաղտնիության եւ վարչական աջակցության վերաբերյալ ներպետական օրենսդրության կիրառության նպատակներով արբիտրաժային տրիբունալի անդամները եւ յուրաքանչյուր անդամի առավելագույնը երեք աշխատակից (եւ հնարավոր արբիտրներն այնքանով, որքանով անհրաժեշտ է արբիտրներին ներկայացվող պահանջները կատարելու նրանց կարողությունը ստուգելու համար) համարվում են այնպիսի անձինք կամ մարմիններ, որոնց համար կարող է հասանելի լինել գաղտնի տեղեկատվությունը: Արբիտրաժային տրիբունալի կամ հնարավոր արբիտրների ստացած տեղեկատվությունը եւ այն տեղեկատվությունը, որն իրավասու մարմիններն ստացել են արբիտրաժային տրիբունալի կողմից, համարվում են Կարգավորող հարկային համաձայնագրի՝ տեղեկատվության փոխանակման եւ վարչական աջակցության մասին դրույթների համաձայն փոխանակված տեղեկատվություն:

2. Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններն ապահովում են, որ արբիտրաժային տրիբունալի անդամները եւ նրանց աշխատակիցները, նախքան արբիտրաժային վարույթին իրենց մասնակցությունը, գրավոր համաձայնություն տան արբիտրաժային վարույթի վերաբերյալ ցանկացած տեղեկատվության գաղտնիությունը պարտադիր պահելու եւ չհրապարակման պարտավորությունը կատարելու վերաբերյալ՝ տեղեկատվության փոխանակման եւ վարչական աջակցության վերաբերյալ Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթներով սահմանված կարգով եւ Պայմանավորվող երկրների կիրառելի օրենքներին համապատասխան:

Հոդված 22. Գործի լուծումը նախքան արբիտրաժային համաձայնության կնքումը

Սույն մասի եւ համապատասխան Կարգավորող հարկային համաձայնագրի՝ փոխադարձ համաձայնությամբ գործերի լուծում նախատեսող դրույթների նպատակներով գործի առնչությամբ փոխհամաձայնեցման ընթացակարգը, ինչպես նաեւ արբիտրաժային վարույթը դադարեցվում են, եթե արբիտրաժի վերաբերյալ դիմում ներկայացնելուց հետո եւ մինչեւ արբիտրաժային տրիբունալի կողմից կայացված որոշումը Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններ ուղարկելը՝ ցանկացած ժամանակ՝

- ա) Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները, գործը լուծելու հետ կապված, փոխադարձ համաձայնության են գալիս, կամ
- բ) գործը ներկայացրած անձը հետ է վերցնում արբիտրաժի վերաբերյալ դիմումը կամ փոխհամաձայնեցման ընթացակարգի վերաբերյալ դիմումը:

Հոդված 23. Արբիտրաժային գործընթացի տեսակը

1. Բացառությամբ այն դեպքերի, երբ Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնության են գալիս այլ կանոններ կիրառելու վերաբերյալ, արբիտրաժային վարույթի նկատմամբ կիրառվում են հետեւյալ կանոնները՝ համաձայն սույն մասի.

- ա) Գործն արբիտրաժին փոխանցելուց հետո յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի իրավասու մարմին նախքան փոխադարձ համաձայնությամբ սահմանված օրը արբիտրաժային տրիբունալ է ներկայացնում առաջարկվող լուծումը, որում անդրադառնում է գործով

չլուծված բոլոր հարցերին (հաշվի առնելով այդ գործով Պայմանավորվող երկրների իրավասու մարմինների միջև նախկինում ձեռք բերված բոլոր համաձայնությունները): Առաջարկվող լուծումը սահմանափակվում է որոշակի դրամական գումարի (օրինակ՝ եկամտի կամ կատարած ծախսի) բաշխմամբ կամ նշված լինելու դեպքում՝ յուրաքանչյուր ճշգրտման կամ գործով նույնանման հարցի համար Կարգավորող հարկային համաձայնագրին համապատասխան գանձվող հարկի առավելագույն դրույքաչափով: Այն դեպքում, երբ Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններին չի հաջողվել համաձայնության գալ համապատասխան Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթի կիրառման պայմաններին վերաբերող այնպիսի հարցի շուրջ (այսուհետ՝ հիմնական հարց), ինչպիսին է, օրինակ, անձի՝ քաղաքացի լինելու կամ մշտական հաստատության առկայության հարցը, իրավասու մարմինները կարող են ներկայացնել այլընտրանքային առաջարկություններ այն հարցերի վերաբերյալ, որոնց լուծումը հնարավոր է միայն այդպիսի հիմնական հարցերին լուծում տալու դեպքում:

- բ) Յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի իրավասու մարմին կարող է նաեւ արբիտրաժային տրիբունալի քննարկմանը ներկայացնել դիրքորոշում արտահայտող օժանդակ փաստաթուղթ: Յուրաքանչյուր իրավասու մարմին, որը ներկայացնում է առաջարկվող լուծում կամ դիրքորոշում արտահայտող օժանդակ փաստաթուղթ, պարտավոր է մյուս իրավասու մարմնին տրամադրել դրա օրինակը մինչեւ առաջարկվող լուծումը եւ դիրքորոշում արտահայտող օժանդակ փաստաթուղթը ներկայացնելու օրը: Յուրաքանչյուր իրավասու մարմին մինչեւ փոխադարձ համաձայնությամբ սահմանված օրը կարող է նաեւ արբիտրաժային տրիբունալ ներկայացնել մյուս իրավասու մարմնի կողմից ներկայացված՝ առաջարկվող լուծման եւ դիրքորոշում արտահայտող օժանդակ փաստաթղթի մասով պատասխան ներառող նյութեր: Ցանկացած պատասխան ներառող նյութի օրինակ տրամադրվում է մյուս իրավասու մարմնին մինչեւ պատասխան ներառող նյութը ներկայացնելու համար սահմանված օրը:
- գ) Արբիտրաժային տրիբունալը որպես իր կողմից ընդունված որոշում ընտրում է գործի շրջանակներում իրավասու մարմինների կողմից յուրաքանչյուր հարցի եւ հիմնական հարցերի վերաբերյալ ներկայացված առաջարկվող լուծումներից որեւէ մեկը եւ չի ներկայացնում որոշման հիմնավորում կամ որեւէ այլ բացատրություն: Արբիտրաժային որոշումն

ընդունվում է տրիբունալի անդամների ծայների պարզ մեծամասնությամբ: Արբիտրաժային տրիբունալն իր որոշումը գրավոր ներկայացնում է Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններ: Արբիտրաժային որոշումը չի կարող նախադեպ լինել:

2. Իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ սույն հոդվածը կիրառելու նպատակով Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել չկիրառելու 1-ին կետն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ: Այս դեպքում, եթե Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները փոխադարձ համաձայնության չեն գալիս այլ կանոնների վերաբերյալ, արբիտրաժային վարույթի նկատմամբ կիրառվում են հետևյալ կանոնները.

- ա) գործն արբիտրաժին փոխանցելուց հետո յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի իրավասու մարմին, առանց անհարկի հետաձգման, տրիբունալի բոլոր անդամներին է ներկայացնում ցանկացած տեղեկատվություն, որը արբիտրաժային որոշում կայացնելու համար կարող է անհրաժեշտ լինել: Եթե Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններն այլ համաձայնության չեն եկել, ցանկացած տեղեկատվություն, որը երկու իրավասու մարմիններին հասանելի չի եղել մինչև արբիտրաժի վերաբերյալ դիմումն ստանալը, որոշում ընդունելիս այդ տեղեկատվությունը հաշվի չի առնվում:
- բ) Արբիտրաժային տրիբունալը արբիտրաժ ներկայացված հարցերի վերաբերյալ որոշում է կայացնում Կարգավորող հարկային համաձայնագրի կիրառելի դրույթների եւ այդ դրույթներին համապատասխան Պայմանավորվող երկրների ներպետական օրենսդրության դրույթների համաձայն: Արբիտրաժային տրիբունալի անդամները ուսումնասիրում են նաեւ ցանկացած այլ աղբյուր, որը Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները հստակորեն սահմանում են փոխադարձ համաձայնությամբ:
- գ) Արբիտրաժային որոշումը Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններ ներկայացվում է գրավոր, եւ դրանում նշվում են որպես հիմք ընդունված իրավունքի աղբյուրները եւ այն պատճառները, որոնք հանգեցրել են այդ որոշման: Արբիտրաժային որոշումն ընդունվում է արբիտրաժային տրիբունալի անդամների ծայների պարզ մեծամասնությամբ: Արբիտրաժային որոշումը չի կարող նախադեպ լինել:

3. Այն Կողմը, որը 2-րդ կետի վերաբերյալ վերապահում չի արել, կարող է իրեն իրավունք վերապահել սույն հոդվածի նախորդ կետերը չկիրառելու այն

Կողմերի հետ կնքած իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնք այդպիսի վերապահում են արել: Այս դեպքում յուրաքանչյուր այդպիսի Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններ պետք է համաձայնության գան արբիտրաժային գործընթացի այն տեսակի վերաբերյալ, որը կիրառելի կլինի այդ Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ: Քանի դեռ այդպիսի համաձայնություն ձեռք չի բերվել, 19-րդ հոդվածը (Պարտադիր ուժ ունեցող արբիտրաժը) չի կիրառվում այդ Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ:

4. Կողմը կարող է նաև որոշել կիրառել 5-րդ կետն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ եւ համապատասխանաբար Ավանդապահին ծանուցում է այդ մասին: Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ երկու Պայմանավորվող երկրների նկատմամբ 5-րդ հոդվածը կիրառվում է, եթե Պայմանավորվող երկրներից որեւէ մեկն այդպիսի ծանուցում է ուղարկել:

5. Նախքան արբիտրաժային վարույթն սկսելը Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններն ապահովում են գործը ներկայացրած յուրաքանչյուր անձի եւ նրանց խորհրդականների՝ արբիտրաժային վարույթի ընթացքում իրավասու մարմիններից որեւէ մեկից կամ արբիտրաժային տրիբունալի անդամներից ստացված որեւէ տեղեկատվություն որեւէ այլ անձի չհաղորդելու վերաբերյալ գրավոր համաձայնությունը: Գործի առնչությամբ Կարգավորող հարկային համաձայնագրով նախատեսված փոխհամաձայնեցման ընթացակարգը, ինչպես նաև սույն մասով նախատեսված արբիտրաժային վարույթը դադարեցվում են, եթե արբիտրաժի վերաբերյալ դիմումը ներկայացնելուց հետո եւ նախքան արբիտրների կողմից որոշումը Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններին ուղարկելն ընկած ժամանակահատվածի ընթացքում՝ ցանկացած ժամանակ, գործը ներկայացրած անձը կամ նրա խորհրդականներից որեւէ մեկն էապես խախտել է այդ համաձայնությունը:

6. Չնայած 4-րդ կետին՝ այն Կողմը, որը 5-րդ կետը չկիրառելու վերաբերյալ որոշում է կայացնում, կարող է իրեն իրավունք վերապահել 5-րդ կետը չկիրառելու մեկ կամ մի քանի որոշակի Կարգավորող հարկային համաձայնագրերի կամ իր բոլոր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ:

7. Այն Կողմը, որը որոշել է կիրառել 5-րդ կետը, կարող է իրեն իրավունք վերապահել սույն մասը չկիրառելու բոլոր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնց վերաբերյալ մյուս Պայմանավորվող երկիրը վերապահում է կատարում 6-րդ կետի համաձայն:

Հոդված 24. Այլ լուծում տալու վերաբերյալ համաձայնություն

1. Սույն մասն իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ կիրառելու նպատակներով Կողմը կարող է որոշել կիրառել 2-րդ կետը եւ համապատասխանաբար Ավանդապահին ծանուցում է այդ մասին: Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող երկու Պայմանավորվող երկրների համար 2-րդ կետը կիրառվում է միայն այն դեպքում, երբ երկու Պայմանավորվող երկրներն այդպիսի ծանուցում են ներկայացրել:

2. Չնայած 19-րդ հոդվածի (Պարտադիր ուժ ունեցող արբիտրաժ) 4-րդ կետին՝ սույն մասի համաձայն՝ արբիտրաժային որոշումը պարտադիր չէ Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրների համար եւ ենթակա չէ կիրառման այն դեպքում, երբ Պայմանավորվող երկրների իրավասու մարմիններն արբիտրաժային որոշումն ստանալուց հետո՝ երեք օրացուցային ամսվա ընթացքում, լուծում չստացած բոլոր հարցերին այլ լուծում տալու վերաբերյալ համաձայնության են գալիս:

3. Այն Կողմը, որը որոշում է կիրառել 2-րդ կետը, կարող է իրեն իրավունք վերապահել 2-րդ կետը կիրառելու իր այն Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ, որոնց նկատմամբ կիրառվում է 23-րդ հոդվածի (Արբիտրաժային գործընթացի տեսակը) 2-րդ կետը:

Հոդված 25. Արբիտրաժային վարույթի հետ կապված ծախսերը

Սույն մասի համաձայն՝ արբիտրաժային վարույթի ընթացքում արբիտրաժային տրիբունալի անդամների վճարները եւ ծախսերը, ինչպես նաեւ Պայմանավորվող երկրների՝ արբիտրաժային վարույթի հետ կապված ցանկացած ծախս կրում են Պայմանավորվող երկրները՝ Պայմանավորվող երկրների իրավասու մարմինների միջեւ փոխադարձ համաձայնությամբ սահմանված կարգով: Այդպիսի համաձայնության բացակայության դեպքում յուրաքանչյուր Պայմանավորվող երկիր կրում է իր մասով ծախսերը, ինչպես նաեւ իր կողմից նշանակված արբիտրաժային տրիբունալի անդամի ծախսերը: Արբիտրաժային տրիբունալը նախագահողի եւ արբիտրաժային վարույթն իրականացնելու հետ կապված մյուս ծախսերը Պայմանավորվող երկրները կրում են հավասարապես:

Հոդված 26. Համապեղելիությունը

1. 18-րդ հոդվածին (VI մասը կիրառելու ընտրությունը) համապատասխան՝ սույն մասի դրույթները կիրառվում են Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթների փոխարեն կամ դրանց բացակայության դեպքում, որոնցով նախատեսվում է փոխհամաձայնեցման ընթացակարգով լուծվող գործից ծագող չլուծված հարցերի մասով արբիտրաժային վարույթ: Յուրաքանչյուր Կողմ, որը սույն մասը կիրառելու վերաբերյալ որոշում է կայացնում, Ավանդապահին ծանուցում է այն մասին, թե արդյոք իր Կարգավորող հարկային համաձայնագրերից յուրաքանչյուրը, բացի այն համաձայնագրերից, որոնց վրա տարածվում է 4-րդ կետով սահմանված վերապահումը, պարունակում է այդպիսի դրույթ, եւ եթե կատարել է այդպիսի վերապահում, ապա ծանուցում է յուրաքանչյուր այդպիսի դրույթ պարունակող հոդվածի եւ կետի համարը: Այն դեպքում, երբ երկու Պայմանավորվող երկրները ներկայացրել են ծանուցում Կարգավորող հարկային համաձայնագրի որեւէ դրույթի վերաբերյալ, այդ Պայմանավորվող երկրների մասով այդ դրույթը փոխարինվում է սույն մասի դրույթներով:

2. Սույն մասով սահմանված՝ փոխհամաձայնեցման ընթացակարգով լուծվող գործից բխող ցանկացած չլուծված հարց, որն այլ հանգամանքներում ենթակա կլիներ լուծման արբիտրաժային գործընթացի շրջանակներում, չի փոխանցվում արբիտրաժ, եթե հարցը վերաբերում է այն գործին, որի մասով նախկինում ստեղծվել է արբիտրաժային տրիբունալ կամ համանման մարմին՝ երկկողմ կամ բազմակողմ կոնվենցիային համապատասխան, որով նախատեսվում է փոխհամաձայնեցման ընթացակարգով լուծվող գործի շրջանակներում չլուծված հարցերի մասով պարտադիր ուժ ունեցող արբիտրաժ:

3. 1-ին կետին համապատասխան՝ սույն մասում ոչինչ չի խանգարում փոխհամաձայնեցման ընթացակարգի համատեքստում ծագող չլուծված հարցերի մասով արբիտրաժի հետ կապված՝ ավելի ընդգրկուն պարտավորությունների կատարմանը, որոնք բխում են այլ կոնվենցիաներից, որոնց միացել են կամ կմիանան Պայմանավորվող երկրները:

4. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել սույն մասը չկիրառելու մեկ կամ մեկից ավելի որոշակի Կարգավորող հարկային համաձայնագրերի (կամ իր բոլոր Կարգավորող հարկային համաձայնագրերի) նկատմամբ, որոնցով արդեն իսկ նախատեսվում է փոխհամաձայնեցման ընթացակարգով լուծվող գործից բխող չլուծված հարցերի մասով պարտադիր ուժ ունեցող արբիտրաժ:

ՄԱՍ VII

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 27. Ստորագրումը եւ վավերացումը, ընդունումը կամ հաստատումը

1. 2016 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ սույն կոնվենցիան բաց է ստորագրման համար՝

- ա) բոլոր Պետությունների կողմից,
- բ) Հերնսիի (Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), Մեն կղզու (Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն), Ջերսիի (Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն) կողմից, եւ
- գ) ցանկացած այլ երկրի կողմից, որը լիազորված է Կողմ դառնալու՝ Կողմերի եւ ստորագրող կողմերի համաձայնությամբ կայացված որոշմամբ:

2. Սույն կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման:

Հոդված 28. Վերապահումները

1. 2-րդ կետի համաձայն՝ սույն կոնվենցիայի մասով որեւէ վերապահում չի կարող կատարվել՝ բացի այն վերապահումներից, որոնք ուղղակիորեն թույլատրվում են հետեւյալ կետերով.

- ա) 3-րդ հոդվածի (Թափանցիկ սուբյեկտները) 5-րդ կետ.
- բ) 4-րդ հոդվածի (Կրկնակի ռեզիդենտություն ունեցող սուբյեկտները) 3-րդ կետ.
- գ) 5-րդ հոդվածի (Կրկնակի հարկումը վերացնելուն ուղղված մեթոդների կիրառությունը) 8-րդ եւ 9-րդ կետեր.
- դ) 6-րդ հոդվածի (Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակը) 4-րդ

- կետ.
- ե) 7-րդ հոդվածի (Պայմանագրի չարաշահման կանխումը) 15-րդ եւ 16-րդ կետեր.
 - զ) 8-րդ հոդվածի (Շահաբաժնի փոխանցման գործարքները) 3-րդ կետ.
 - է) 9-րդ հոդվածի (Իրենց արժեքը գլխավորապես անշարժ գույքից ձեւավորող՝ ձեռնարկությունների բաժնեմասերի կամ մասնաբաժինների օտարումից ստացված ակտիվի արժեքի հավելաճը) 6-րդ կետ.
 - ը) 10-րդ հոդվածի (Երրորդ երկրներում գտնվող մշտական հաստատությունների համար չարաշահումներից խուսափելու կանոնը) 5-րդ կետ.
 - թ) 11-րդ հոդվածի (Կողմի՝ իր ռեզիդենտներին հարկելու իրավունքը սահմանափակելու նպատակով հարկային համաձայնագրերի կիրառումը) 3-րդ կետ.
 - ժ) 12-րդ հոդվածի (Կոմիսիոների միջոցով գործարքների կնքման եւ համանման ռազմավարության միջոցով մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 4-րդ կետ.
 - ժա) 13-րդ հոդվածի (Գործունեության որոշակի տեսակների համար սահմանված բացառությունների կիրառմամբ մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 6-րդ կետ.
 - ժբ) 14-րդ հոդվածի (Պայմանագրերի բաժանումը) 3-րդ կետ.
 - ժգ) 15-րդ հոդվածի (Ձեռնարկության հետ սերտորեն փոխկապակցված անձի սահմանումը) 2-րդ կետ.
 - ժդ) 16-րդ հոդվածի (Փոխհամաձայնեցման ընթացակարգը) 5-րդ կետ.
 - ժե) 17-րդ հոդվածի (Համապատասխանության ճշգրտումները) 3-րդ կետ.
 - ժզ) 19-րդ հոդվածի (Պարտադիր ուժ ունեցող արբիտրաժը) 11-րդ եւ 12-րդ կետեր.
 - ժէ) 23-րդ հոդվածի (Արբիտրաժային գործընթացի տեսակը) 2-րդ, 3-րդ, 6-րդ եւ 7-րդ կետեր.
 - ժը) 24-րդ հոդվածի (Այլ լուծում գտնելու վերաբերյալ համաձայնությունը) 3-

րդ կետ.

ժթ) 26-րդ հոդվածի (Համատեղելիությունը) 4-րդ կետ.

ի) 35-րդ հոդվածի (Գործողությունը) 6-րդ եւ 7-րդ կետեր, եւ

իա) 36-րդ հոդվածի (VI մասի գործողությունը) 2-րդ կետ:

2. ա) Չհակասելով 1-ին կետին՝ այն Կողմը, որը 18-րդ հոդվածի (VI մասը կիրառելու ընտրությունը) համաձայն որոշում է կիրառել VI մասը (Արբիտրաժ), կարող է ձեակերպել մեկ կամ ավելի վերապահումներ այն դեպքերի մասով, որոնք ենթակա են լուծման արբիտրաժի կողմից՝ VI մասի դրույթներին համապատասխան (Արբիտրաժ): Այն Կողմի համար, որը սույն կոնվենցիայի Կողմ դառնալուց հետո, 18-րդ հոդվածի (VI մասը կիրառելու ընտրությունը) համաձայն, որոշում է կիրառել VI մասը (Արբիտրաժ), սույն ենթակետի համաձայն կատարվող վերապահումները կատարվում են այն ժամանակ, երբ Կողմը ծանուցումը ներկայացնում է Ավանդապահին՝ 18-րդ հոդվածին (VI մասը կիրառելու ընտրությունը) համապատասխան:

բ) «Ա» ենթակետին համապատասխան կատարված վերապահումները ենթակա են ընդունման: «Ա» ենթակետին համապատասխան կատարված վերապահումը համարվում է Կողմի կողմից ընդունված, եթե Կողմը վերապահման մասով առարկություն ունենալու մասին Ավանդապահին չի ծանուցել մինչեւ Ավանդապահի կողմից վերապահման մասին ծանուցման օրվանից սկսած տասներկու օրացուցային ամսվա ժամանակահատվածի ավարտը կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին իր փաստաթուղթն ի պահ հանձնելու օրը՝ կախված այն հանգամանքից, թե այդ ժամկետներից որն է ավելի ուշ: Այն Կողմը, որը սույն կոնվենցիայի Կողմ դառնալուց հետո, 18-րդ հոդվածին (VI մասը կիրառելու ընտրությունը) համապատասխան, որոշում է կիրառել VI մասը (Արբիտրաժը), այլ Կողմերի կողմից «ա» ենթակետի համաձայն նախկինում կատարված վերապահումների մասով իր առարկությունները կարող է ներկայացնել առաջինը նշված Կողմի ծանուցումը 18-րդ հոդվածին (VI մասը կիրառելու ընտրությունը) համապատասխան Ավանդապահին ներկայացնելու ժամանակ: Այն դեպքում, երբ Կողմը «ա» ենթակետին համապատասխան կատարված վերապահման մասով առարկություն է ներկայացնում, ապա VI մասը (Արբիտրաժը) ամբողջությամբ չի կիրառվում առարկող Կողմի եւ վերապահում կատարած Կողմի միջեւ:

3. Եթե սույն կոնվենցիայի համապատասխան դրույթներով այլ բան ուղղակիորեն չի նախատեսվում, ապա 1-ին կամ 2-րդ կետերին համապատասխան կատարված վերապահումը՝

ա) վերապահում կատարած Կողմի համար մեկ այլ Կողմի հետ հարաբերություններում փոփոխում է սույն կոնվենցիայի այն դրույթները, որոնց այդ վերապահումը վերաբերում է՝ կատարված վերապահման ծավալով, եւ

բ) վերապահում կատարած Կողմի հետ հարաբերություններում մյուս Կողմի համար այդ դրույթները փոփոխում է նույն ծավալով:

4. Այն Կարգավորող հարկային համաձայնագրերի մասով կիրառելի վերապահումները, որոնք կնքվել են այն երկրի կամ տարածքի կողմից կամ անունից, որի միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է Կողմը, եթե այդ երկիրը կամ տարածքը Կոնվենցիայի Կողմ չէ՝ 27-րդ հոդվածի (Ստորագրումը եւ վավերացումը, ընդունումը կամ հաստատումը) 1-ին կետի «բ» կամ «գ» ենթակետերի համաձայն, կատարվում են պատասխանատու Կողմի կողմից եւ կարող են տարբերվել այդ Կողմի՝ իր Կարգավորող հարկային համաձայնագրերի մասով կատարված վերապահումներից:

5. Վերապահումները կատարվում են ստորագրելու ժամանակ կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս՝ սույն հոդվածի 2-րդ, 6-րդ եւ 9-րդ կետերի դրույթների եւ 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 5-րդ կետի համաձայն: Այնուամենայնիվ, այն Կողմի համար, որը սույն կոնվենցիայի Կողմ դառնալուց հետո 18-րդ հոդվածի (VI մասը կիրառելու ընտրությունը) համաձայն որոշում է կիրառել VI մասը (Արբիտրաժը), սույն հոդվածի 1-ին կետի «ժզ», «ժէ», «ժը» եւ «ժթ» ենթակետերի վերաբերյալ վերապահումները կատարվում են այն ժամանակ, երբ Կողմը ծանուցում է ներկայացնում Ավանդապահին՝ 18-րդ հոդվածի (VI մասը կիրառելու ընտրությունը) համաձայն:

6. Այն դեպքում, երբ վերապահումները կատարվում են ստորագրման պահին, դրանք հաստատվում են վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ հանձնելիս, եթե վերապահումների մասին փաստաթղթում ուղղակիորեն չի նշվում, որ դրանք պետք է համարվեն վերջնական՝ սույն հոդվածի 2-րդ, 5-րդ եւ 9-րդ կետերի դրույթների եւ 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 5-րդ կետի համաձայն:

7. Եթե վերապահումները չեն կատարվում ստորագրման պահին, ապա այդ պահին Ավանդապահին տրամադրվում է նախատեսվող վերապահումների

նախնական ցանկ:

8. Այն վերապահումների համար, որոնք կատարվել են հետեւյալ դրոյթներից յուրաքանչյուրի համաձայն, համաձայնությունների ցանկը, որոնց մասին ծանուցվել է 2-րդ հոդվածի (Եզրույթների մեկնաբանությունը) 1-ին կետի «ա» ենթակետի ii պարբերության համաձայն, եւ որոնք համապատասխան դրոյթում սահմանված վերապահման առարկա են (իսկ «գ», «դ» եւ «ժ» ենթակետերում թվարկվածներից բացի՝ հետեւյալ դրոյթներից յուրաքանչյուրի համաձայն կատարված վերապահման դեպքում՝ յուրաքանչյուր համապատասխան դրոյթ պարունակող հոդվածի եւ կետի համարը) պետք է տրամադրվի այդպիսի վերապահում կատարելու դեպքում.

- ա) 3-րդ հոդվածի (Թափանցիկ սուբյեկտները) 5-րդ կետի «բ», «գ», «դ», «ե» եւ «է» ենթակետեր.
- բ) 4-րդ հոդվածի (Կրկնակի ռեզիդենտություն ունեցող սուբյեկտները) 3-րդ կետի «բ», «գ» եւ «դ» ենթակետեր.
- գ) 5-րդ հոդվածի (Կրկնակի հարկումը վերացնելուն ուղղված մեթոդների կիրառությունը) 8-րդ եւ 9-րդ կետեր.
- դ) 6-րդ հոդվածի (Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակը) 4-րդ կետ.
- ե) 7-րդ հոդվածի (Պայմանագրի չարաշահման կանխումը) 15-րդ կետի «բ» եւ «գ» ենթակետեր.
- զ) 8-րդ հոդվածի (Շահաբաժնի փոխանցման գործարքներ) 3-րդ կետի «բ» ենթակետի i, ii եւ iii պարբերություններ.
- է) 9-րդ հոդվածի (Իրենց արժեքը գլխավորապես անշարժ գույքից ձեւավորող՝ ձեռնարկությունների բաժնեմասերի կամ մասնաբաժինների օտարումից ստացված ակտիվի արժեքի հավելածը) 6-րդ կետի «դ», «ե» եւ «զ» ենթակետեր.
- ը) 10-րդ հոդվածի (Երրորդ երկրներում գտնվող մշտական հաստատությունների համար չարաշահումներից խուսափելու կանոնը) 5-րդ կետի «բ» եւ «գ» ենթակետեր.
- թ) 11-րդ հոդվածի (Կողմի՝ իր ռեզիդենտներին հարկելու իրավունքը սահմանափակելու նպատակով հարկային համաձայնագրերի կիրառումը) 3-րդ կետի «բ» ենթակետ.
- ժ) 13-րդ հոդվածի (Կոմիսիոնների միջոցով գործարքների կնքման եւ

համանման ռազմավարության միջոցով մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 6-րդ կետի «բ» ենթակետ.

ժա) 14-րդ հոդվածի (Պայմանագրերի բաժանումը) 3-րդ կետի «բ» ենթակետ.

ժբ) 16-րդ հոդվածի (Փոխհամաձայնեցման ընթացակարգը) 5-րդ կետի «բ» ենթակետ.

ժգ) 17-րդ հոդվածի (Համապատասխանության ճշգրտումները) 3-րդ կետի «ա» ենթակետ.

ժդ) 23-րդ հոդվածի (Արբիտրաժային գործընթացի տեսակը) 6-րդ կետ, եւ

ժե) 26-րդ հոդվածի (Համատեղելիությունը) 4-րդ կետ:

«Ա» ենթակետից մինչեւ «Ժե» ենթակետում նշված վերապահումները չեն կիրառվում ցանկացած Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ, որը ներառված չէ սույն կետում նշված ցանկում:

9. Ցանկացած Կողմ, որը վերապահում է կատարել 1-ին կամ 2-րդ կետին համապատասխան, կարող է ցանկացած ժամանակ հետ վերցնել վերապահումը կամ այն փոխարինել ավելի սահմանափակ վերապահմամբ Ավանդապահին հասցեագրված ծանուցման միջոցով: Այդպիսի Կողմը ներկայացնում է լրացուցիչ ծանուցումներ 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 6-րդ կետի համաձայն, ինչը կարող է պահանջվել վերապահումը հետ վերցնելու կամ փոխարինելու արդյունքում: 35-րդ հոդվածի (Գործողությունը) 7-րդ կետի համաձայն՝ վերապահումը հետ վերցնելը կամ փոխարինելն ուժի մեջ է մտնում՝

ա) միայն այն Պետությունների եւ երկրների հետ Կարգավորող հարկային համաձայնագրերի մասով, որոնք Կոնվենցիայի Կողմ են, երբ Ավանդապահին ստանում է վերապահումը հետ վերցնելու կամ փոխարինելու մասին ծանուցումը՝

i) այն դրույթների մասով վերապահումների համար, որոնք վերաբերում են աղբյուրի մոտ հարկմանը, երբ այդպիսի հարկման հանգեցնող գործողությունը տեղի է ունենում վերապահումը հետ վերցնելու կամ փոխարինելու մասին ծանուցման վերաբերյալ Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրվանից վեց օրացուցային ամիսներին հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո, եւ

ii) մյուս բոլոր դրույթների մասով վերապահումների համար, որոնք

կատարվել են այն հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում գանձվող հարկերի համար, որոնք սկսվում են վերապահումը հետ վերցնելու կամ փոխարինելու մասին ծանուցման վերաբերյալ Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրվանից վեց օրացուցային ամիսներին հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո, եւ

- բ) Կարգավորող հարկային համաձայնագրի մասով, որով մեկ կամ մի քանի Պայմանավորվող երկրներ դառնում են սույն կոնվենցիայի Կողմ՝ վերապահումը հետ վերցնելու կամ փոխարինելու մասին ծանուցումը Ավանդապահի կողմից ստանալու օրվանից հետո՝ այդ Պայմանավորվող երկրների համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթվին:

Հոդված 29. Ծանուցումները

1. Սույն հոդվածի 5-րդ եւ 6-րդ կետերի եւ 35-րդ հոդվածի (Գործողությունը) 7-րդ կետի համաձայն՝ հետեւյալ դրույթներով նախատեսված ծանուցումները կատարվում են ստորագրման ժամանակ կամ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս.

- ա) 2-րդ հոդվածի (Եզրույթների մեկնաբանությունը) 1-ին կետի «ա» ենթակետի ii պարբերություն.
- բ) 3-րդ հոդվածի (Թափանցիկ սուբյեկտները) 6-րդ կետ.
- գ) 4-րդ հոդվածի (Կրկնակի ռեզիդենտություն ունեցող սուբյեկտները) 4-րդ կետ.
- դ) 5-րդ հոդվածի (Կրկնակի հարկումը վերացնելուն ուղղված մեթոդների կիրառությունը) 10-րդ կետ.
- ե) 6-րդ հոդվածի (Կարգավորող հարկային համաձայնագրի նպատակը) 5-րդ եւ 6-րդ կետեր.
- զ) 7-րդ հոդվածի (Պայմանագրի չարաշահման կանխումը) 17-րդ կետ.
- է) 8-րդ հոդվածի (Շահաբաժնի փոխանցման գործարքներ) 4-րդ կետ.
- ը) 9-րդ հոդվածի (Իրենց արժեքը գլխավորապես անշարժ գույքից ձեւավորող՝ ձեռնարկությունների բաժնեմասերի կամ մասնաբաժինների օտարումից ստացված ակտիվի արժեքի հավելվածը) 7-րդ եւ 8-րդ կետեր.

- թ) 10-րդ հոդվածի (Երրորդ երկրներում գտնվող մշտական հաստատությունների համար չարաշահումներից խուսափելու կանոնը) 6-րդ կետ.
- ժ) 11-րդ հոդվածի (Կողմի՝ իր ռեզիդենտներին հարկելու իրավունքը սահմանափակելու նպատակով հարկային համաձայնագրերի կիրառումը) 4-րդ կետ.
- ժա) 12-րդ հոդվածի (Կոմիսիոների միջոցով գործարքների կնքման եւ համանման ռազմավարության միջոցով մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 5-րդ եւ 6-րդ կետեր.
- ժբ) 13-րդ հոդվածի (Գործունեության որոշակի տեսակների համար սահմանված բացառությունների կիրառմամբ մշտական հաստատության կարգավիճակից արհեստականորեն խուսափելը) 7-րդ եւ 8-րդ կետեր.
- ժգ) 14-րդ հոդվածի (Պայմանագրերի բաժանումը) 4-րդ կետ.
- ժդ) 16-րդ հոդվածի (Փոխհամաձայնեցման ընթացակարգը) 6-րդ կետ.
- ժե) 17-րդ հոդվածի (Համապատասխանության ճշգրտումները) 4-րդ կետ.
- ժզ) 18-րդ հոդված (VI մասը կիրառելու ընտրությունը).
- ժէ) 23-րդ հոդվածի (Արբիտրաժային գործընթացի տեսակը) 4-րդ կետ.
- ժը) 24-րդ հոդվածի (Այլ որոշման վերաբերյալ համաձայնությունը) 1-ին կետ.
- ժթ) 26-րդ հոդվածի (Համատեղելիությունը) 1-ին կետ, եւ
- ի) 35-րդ հոդվածի (Գործողությունը) 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ եւ 7-րդ կետեր:

2. Այն Կարգավորող հարկային համաձայնագրերի մասով ծանուցումները, որոնք կնքվել են այն երկրի կամ տարածքի կողմից կամ անունից, որոնց միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է Կողմը, երբ այդ երկիրը կամ տարածքը Կոնվենցիայի Կողմ չէ՝ համաձայն 27-րդ հոդվածի (Ստորագրումը եւ վավերացումը, ընդունումը կամ հաստատումը) 1-ին կետի «բ» կամ «գ» ենթակետերի, կատարվում են պատասխանատու Կողմի կողմից եւ կարող են տարբերվել այդ Կողմի՝ իր Կարգավորող հարկային համաձայնագրերի մասով կատարված ծանուցումներից:

3. Այն դեպքում, երբ ծանուցումները ներկայացվում են ստորագրման ժամանակ, դրանք հաստատվում են վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու պահին, եթե ծանուցումների մասին

փաստաթղթում ուղղակիորեն չի նշվում, որ դրանք պետք է համարվեն վերջնական՝ սույն հոդվածի 5-րդ եւ 6-րդ կետերի դրույթների եւ 35-րդ հոդվածի (Գործողությունը) 7-րդ կետի համաձայն:

4. Եթե ծանուցումները չեն կատարվում ստորագրման ժամանակ, այդ պահին տրամադրվում է ակնկալվող ծանուցումների նախնական ցանկ:

5. Կողմը ցանկացած ժամանակ կարող է ընդլայնել այն համաձայնագրերի ցանկը, որոնց մասին ծանուցվել է 2-րդ հոդվածի (Եզրույթների մեկնաբանությունը) 1-ին կետի «ա» ենթակետի ii պարբերության համաձայն, Ավանդապահին հասցեագրված ծանուցման միջոցով: Այդ ծանուցման մեջ Կողմը նշում է, թե արդյոք տվյալ համաձայնագրի վրա տարածվում է Կողմի կատարած՝ 28-րդ հոդվածի (Վերապահումները) 8-րդ կետում թվարկված վերապահումներից որեւէ մեկը: Կողմը կարող է նաեւ կատարել 28-րդ հոդվածի (Վերապահումները) 8-րդ կետում նշված նոր վերապահում, եթե լրացուցիչ համաձայնագիրն առաջինն է, որի վրա տարածվում է այդպիսի վերապահումը: Կողմը նաեւ նշում է ցանկացած լրացուցիչ ծանուցման մասին, որը կարող է պահանջվել 1-ին կետի «բ»-«ժ» ենթակետերով՝ նշելու համար լրացուցիչ համաձայնագիր ներառելը: Բացի այդ, եթե առաջին անգամ ընդլայնումը հանգեցրել է այնպիսի հարկային համաձայնագրի ներառման, որը կնքվել է այն երկրի կամ տարածքի կողմից կամ անունից, որի միջազգային հարաբերությունների համար պատասխանատու է Կողմը, ապա այդ Կողմը նշում է ցանկացած վերապահում (28-րդ հոդվածի (Վերապահումները) 4-րդ կետի համաձայն) կամ ծանուցում (սույն հոդվածի 2-րդ կետի համաձայն), որը կիրառելի է այն Կարգավորող հարկային համաձայնագրի նկատմամբ, որը կնքվել է այդ երկրի կամ տարածքի կողմից կամ անունից: Այն օրը, երբ ավելացված համաձայնագիրը (համաձայնագրերը), որի մասին ծանուցվել է 2-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետի ii պարբերության համաձայն, դառնում է Կարգավորող հարկային համաձայնագիր, 35-րդ հոդվածի (Գործողությունը) դրույթների համաձայն կարգավորվում է, թե որ օրվանից են Կարգավորող հարկային համաձայնագրի փոփոխություններն ուժի մեջ մտնում:

6. Կողմը 1-ին կետի «բ»-«ժ» ենթակետերի համաձայն կարող է կատարել լրացուցիչ ծանուցումներ՝ Ավանդապահին հասցեագրված ծանուցման միջոցով: Այդ ծանուցումներն ուժի մեջ են մտնում՝

ա) միայն այն Պետությունների եւ երկրների հետ Կարգավորող հարկային համաձայնագրերի մասով, որոնք Կոնվենցիայի Կողմ են, երբ Ավանդապահին ստանում է լրացուցիչ ծանուցում՝

ի) այն դրույթների մասով ծանուցումների համար, որոնք վերաբերում են

աղբյուրի մոտ հարկմանը, երբ այդպիսի հարկման հանգեցնող գործողությունը տեղի է ունենում լրացուցիչ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրվանից վեց օրացուցային ամիսներին հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո, եւ

ii) մյուս բոլոր դրույթների մասով ծանուցումների համար, որոնք կատարվել են այն հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում գանձվող հարկերի համար, որոնք սկսվում են լրացուցիչ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրվանից վեց օրացուցային ամիսներին հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ դրանից հետո, եւ

բ) Կարգավորող հարկային համաձայնագրի մասով, որով մեկ կամ մի քանի Պայմանավորվող երկրներ դառնում են սույն կոնվենցիայի Կողմ լրացուցիչ ծանուցումն Ավանդապահի ստանալու օրվանից հետո՝ այդ Պայմանավորվող երկրների համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթվին:

Հոդված 30. Կարգավորող հարկային համաձայնագրերի հետագա փոփոխությունները

Սույն կոնվենցիայի դրույթները չեն սահմանափակում Կարգավորող հարկային համաձայնագրի այն հետագա փոփոխությունները, որոնց շուրջ Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրները կարող են գալ համաձայնության:

Հոդված 31. Կողմերի համաժողովը

1. Կողմերը կարող են հրավիրել Կողմերի համաժողով՝ սույն կոնվենցիայի դրույթներով պահանջվող կամ դրանց համապատասխան որոշումներ կայացնելու կամ որոշակի գործառույթներ իրականացնելու նպատակով:

2. Կողմերի համաժողովը կազմակերպվում է Ավանդապահի կողմից:

3. Ցանկացած Կողմ կարող է պահանջել հրավիրել Կողմերի համաժողով՝ Ավանդապահին այդ մասին խնդրանք ներկայացնելով: Ավանդապահը բոլոր Կողմերին տեղեկացնում է այդպիսի խնդրանքի մասին: Դրանից հետո Ավանդապահը հրավիրում է Կողմերի համաժողով, եթե խնդրանքի մասին

Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելուց հետո՝ վեց օրացուցային ամիսների ընթացքում, տվյալ խնդրանքին կողմ է լինում Կողմերի մեկ երրորդը:

Հոդված 32. Մեկնաբանությունը եւ կիրառումը

1. Կարգավորող հարկային համաձայնագրի դրույթների, այնպես, ինչպես դրանք փոփոխված են սույն կոնվենցիայով, մեկնաբանության եւ կիրառման մասով ծագող ցանկացած հարց լուծվում է Կարգավորող հարկային համաձայնագրի այն դրույթին (դրույթներին) համապատասխան, որը (որոնք) վերաբերում է (են) Կարգավորող հարկային համաձայնագրի մեկնաբանությանը կամ կիրառմանն առնչվող հարցերի փոխադարձ համաձայնությամբ լուծմանը (այնպես, ինչպես այդ դրույթները կարող են փոփոխվել սույն կոնվենցիայով):

2. Սույն կոնվենցիայի մեկնաբանության կամ կիրառման հետ կապված ցանկացած հարց կարող է քննարկվել Կողմերի համաժողովի ընթացքում, որը հրավիրվել է 31-րդ հոդվածի (Կողմերի համաժողովը) 3-րդ կետին համապատասխան:

Հոդված 33. Փոփոխությունները

1. Ցանկացած Կողմ կարող է սույն կոնվենցիայում փոփոխություններ առաջարկել՝ Ավանդապահին ներկայացնելով առաջարկվող փոփոխությունը:

2. Առաջարկվող փոփոխությունը քննարկելու նպատակով կարող է հրավիրվել Կողմերի համաժողով՝ 31-րդ հոդվածի (Կողմերի համաժողովը) 3-րդ կետին համապատասխան:

Հոդված 34. Ուժի մեջ մտնելը

1. Սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման կամ հաստատման մասին հինգերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու օրվանից հաշվարկվող երեք օրացուցային ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

2. Ցանկացած Ստորագրող կողմի համար, որը վավերացրել, ընդունել կամ հաստատել է սույն կոնվենցիան վավերացման, ընդունման կամ հաստատման մասին հինգերորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդպիսի Ստորագրող կողմի կողմից՝ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնվելու օրվանից

հաշվարկվող երեք օրացուցային ամիսներին հաջորդող ամսվա առաջին օրը:

Հոդված 35. Գործողությունը

1. Կարգավորող հարկային համաձայնագրի մասով սույն կոնվենցիայի դրույթները գործում են յուրաքանչյուր Պայմանավորվող երկրում՝

- ա) այն հարկերի մասով, որոնք պահվում են աղբյուրի մոտ այն գումարներից, որոնք վճարվում են ոչ ռեզիդենտներին կամ փոխանցվում են նրանց հաշվին, եթե այդպիսի հարկման հանգեցնող գործողությունը տեղի է ունենում հաջորդ օրացուցային տարվա առաջին օրը կամ դրանից հետո, որն սկսվում է Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթվից կամ դրանից հետո, եւ
- բ) այդ Պայմանավորվող երկրի կողմից գանձվող մյուս բոլոր հարկերի մասով, որոնք գանձվում են Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար՝ Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրների համար սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթվից հետո վեց օրացուցային ամիսները (կամ ավելի կարճ ժամկետում, եթե բոլոր Պայմանավորվող երկրները Ավանդապահին ծանուցում են այն մասին, որ մտադրված են կիրառելու այդպիսի կարճ ժամկետ) լրանալու օրվանից սկսվող կամ դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

2. Կողմը բացառապես իր կողմից 1-ին կետի «ա» ենթակետի եւ 5-րդ կետի «ա» ենթակետի կիրառման նպատակով կարող է «հաշվետու ժամանակաշրջանը» բառերը «օրացուցային տարով» բառերով փոխարինելու տարբերակն ընտրել եւ համապատասխանաբար Ավանդապահին ծանուցում է այդ մասին:

3. Բացառապես իր կողմից 1-ին կետի «ա» ենթակետի եւ 5-րդ կետի «ա» ենթակետի կիրառման նպատակով Կողմը կարող է «ժամկետը լրանալու օրվանից սկսվող կամ դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջան» բառերը «ժամկետը լրանալու օրվանից սկսվող կամ դրան հաջորդող տարվա հունվարի 1-ին կամ դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջան» բառերով փոխարինելու տարբերակն ընտրել եւ համապատասխանաբար Ավանդապահին ծանուցում է այդ մասին:

4. Չհակասելով սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ 16-րդ հոդվածը (Փոխհամաձայնեցման ընթացակարգը) Կարգավորող հարկային համաձայնագրի

մասով գործում է Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթվին կամ դրանից հետո Պայմանավորվող երկրի իրավասու մարմին ներկայացված գործի առնչությամբ՝ բացի այն գործերից, որոնք, Կարգավորող հարկային համաձայնագրին համապատասխան, այդ ամսաթվի դրությամբ չէին թույլատրվում ներկայացնել նախքան Կոնվենցիայով դրանում փոփոխություն կատարելը՝ առանց հաշվի առնելու այն հաշվետու ժամանակաշրջանը, որին վերաբերում է տվյալ գործը:

5. 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 5-րդ կետի համաձայն՝ 2-րդ հոդվածի (Եզրույթների մեկնաբանությունը) 1-ին կետի «ա» ենթակետի ii պարբերության մեջ նշված համաձայնագրերի ցանկի ընդլայնման արդյունքում նոր Կարգավորող հարկային համաձայնագրի համար սույն կոնվենցիայի դրույթները յուրաքանչյուր Պայմանավորվող երկրում գործում են՝

ա) այն հարկերի մասով, որոնք պահվում են աղբյուրի մոտ այն գումարներից, որոնք վճարվում են ոչ ռեզիդենտներին կամ փոխանցվում են նրանց հաշվին, եթե այդպիսի հարկման հանգեցնող գործողությունը տեղի է ունենում հաջորդ օրացուցային տարվա առաջին օրը կամ դրանից հետո, որն սկսվում է համաձայնագրերի ցանկի ընդլայնման վերաբերյալ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրվանից հետո 30 օրը լրանալուն պես կամ դրանից հետո, եւ

բ) այդ Պայմանավորվող երկրի կողմից գանձվող մյուս բոլոր հարկերի մասով, որոնք գանձվում են հաշվետու ժամանակաշրջանում, որն սկսվում է համաձայնագրերի ցանկի ընդլայնման վերաբերյալ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրվանից ինն օրացուցային ամիսները (կամ ավելի կարճ ժամկետում, եթե բոլոր Պայմանավորվող երկրներն Ավանդապահին ծանուցում են այդպիսի կարճ ժամկետ կիրառելու մտադրության մասին) լրանալու օրվանից կամ դրանից հետո:

6. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել 4-րդ կետը չկիրառելու իր Կարգավորող հարկային համաձայնագրերի նկատմամբ:

7. ա) Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել փոխարինելու՝

ի) 1-ին եւ 4-րդ կետերի «Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթիվը»

շարադրանքը, եւ

- ii) 5-րդ կետի «համաձայնագրերի ցանկի ընդլայնման վերաբերյալ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրը» շարադրանքը՝

«35-րդ հոդվածի (Գործողությունը) 7-րդ կետի վերաբերյալ վերապահում կատարած յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի՝ այդ Կարգավորող հարկային համաձայնագրի մասով սույն կոնվենցիայի դրույթներն ուժի մեջ մտնելու համար ներքին ընթացակարգերն ավարտելու մասին վերջին ծանուցումն Ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո» շարադրանքով.

- iii) 28-րդ հոդվածի (Վերապահումները) 9-րդ կետի «ա» ենթակետի «վերապահումը հետ վերցնելու կամ փոխարինելու մասին ծանուցման վերաբերյալ Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու ամսաթվին» շարադրանքը, եւ

- iv) 28-րդ հոդվածի (Վերապահումները) 9-րդ կետի «բ» ենթակետի «այդ Պայմանավորվող երկրների համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթվին» շարադրանքը՝

«35-րդ հոդվածի (Գործողությունը) 7-րդ կետի վերաբերյալ վերապահում կատարած յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի կողմից՝ այդ Կարգավորող հարկային համաձայնագրի մասով վերապահումը հետ վերցնելը կամ փոխարինելն ուժի մեջ մտնելու համար իր ներքին ընթացակարգերն ավարտելու մասին վերջին ծանուցումն Ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո» շարադրանքով.

- v) 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 6-րդ կետի «ա» ենթակետի «լրացուցիչ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու ամսաթվին» շարադրանքը, եւ

- vi) 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 6-րդ կետի «բ» ենթակետի «այդ Պայմանավորվող երկրների համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթվին» շարադրանքը՝

«35-րդ հոդվածի (Գործողությունը) 7-րդ կետի վերաբերյալ վերապահում կատարած յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի՝ այդ Կարգավորող հարկային համաձայնագրի մասով լրացուցիչ ծանուցումն ուժի մեջ մտնելու համար իր ներքին ընթացակարգերն

ավարտելու մասին վերջին ծանուցումն Ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո» շարադրանքով.

- vii) 36-րդ հոդվածի (VI մասի գործողությունը) 1-ին եւ 2-րդ կետերի «Կարգավորող հարկային համաձայնագրի Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ավելի ուշ ամսաթիվը» շարադրանքը՝

«35-րդ հոդվածի (Գործողությունը) 7-րդ կետի վերաբերյալ վերապահում կատարած յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի՝ այդ Կարգավորող հարկային համաձայնագրի մասով սույն կոնվենցիայի դրույթներն ուժի մեջ մտնելու համար իր ներքին ընթացակարգերն ավարտելու մասին վերջին ծանուցումն Ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո» շարադրանքով, եւ

- viii) 36-րդ հոդվածի (VI մասի գործողությունը) 3-րդ կետի «համաձայնագրերի ցանկն ընդլայնելու վերաբերյալ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու ամսաթիվը» շարադրանքը,

- ix) 36-րդ հոդվածի (VI մասի գործողությունը) 4-րդ կետի «վերապահումը հետ վերցնելու մասին ծանուցման վերաբերյալ Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու ամսաթիվը», «վերապահումը փոխարինելու մասին ծանուցման վերաբերյալ Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու ամսաթիվը» եւ «վերապահման մասով առարկությունը հանելու մասին ծանուցման վերաբերյալ Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու ամսաթիվը» շարադրանքը, եւ

- x) 6-րդ հոդվածի (VI մասի գործողությունը) 5-րդ կետի «լրացուցիչ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու ամսաթիվը» շարադրանքը՝

«35-րդ հոդվածի (Գործողությունը) 7-րդ կետի վերաբերյալ վերապահում կատարած յուրաքանչյուր Պայմանավորվող երկրի՝ այդ Կարգավորող հարկային համաձայնագրի մասով VI մասի (Արբիտրաժը) դրույթներն ուժի մեջ մտնելու համար իր ներքին ընթացակարգերն ավարտելու վերաբերյալ վերջին ծանուցումն Ավանդապահի ստանալու օրվանից 30 օր հետո» շարադրանքով:

- բ) «Ա» ենթակետին համապատասխան վերապահում կատարած Կողմն Ավանդապահին եւ մյուս Պայմանավորվող երկրին (երկրներին) միաժամանակ ծանուցում է իր ներքին ընթացակարգերն ավարտելու մասին:
- գ) Այն դեպքում, երբ Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող մեկ կամ ավելի Պայմանավորվող երկրներ սույն կետի վերաբերյալ վերապահում են անում, Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող բոլոր Պայմանավորվող երկրների համար սույն կետի համաձայն կարգավորվում է, թե որ օրվանից է Կոնվենցիայի դրույթները, վերապահումը հետ վերցնելը կամ փոխարինելը, այդ Կարգավորող հարկային համաձայնագրի կամ VI մասի (Արբիտրաժը) մասով լրացուցիչ ծանուցումն ուժի մեջ մտնում:

Հոդված 36. VI մասի գործողությունը

1. Չհակասելով 28-րդ հոդվածի (Վերապահումները) 9-րդ կետին, 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 6-րդ կետին եւ 35-րդ հոդվածի (Գործողությունը) 1-6-րդ կետերին՝ Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող երկու Պայմանավորվող երկրների համար VI մասի (Արբիտրաժը) դրույթները գործում են՝

- ա) Պայմանավորվող երկրի իրավասու մարմին ներկայացված գործերի մասով (ինչպես ներկայացված է 19-րդ հոդվածի (Պարտադիր ուժ ունեցող արբիտրաժը) 1-ին կետի «ա» ենթակետում)՝ Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ավելի ուշ ամսաթվին կամ դրանից հետո, եւ
- բ) նախքան Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ավելի ուշ ամսաթիվը Պայմանավորվող երկրի իրավասու մարմին ներկայացված գործերի մասով՝ այն ամսաթվին, երբ երկու Պայմանավորվող երկրներն Ավանդապահին ծանուցել են, որ իրենք փոխադարձ համաձայնության են եկել 19-րդ հոդվածի (Պարտադիր ուժ ունեցող արբիտրաժը) 10-րդ կետին համապատասխան՝ նշելով այն ամսաթվի կամ ամսաթվերի վերաբերյալ տեղեկատվությունը, երբ այդպիսի գործերը կհամարվեն Պայմանավորվող երկրի իրավասու մարմին ներկայացված (ինչպես ներկայացված է 19-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետում)՝ այդ

փոխադարձ համաձայնության պայմաններին համապատասխան:

2. Կողմը կարող է իրեն իրավունք վերապահել կիրառելու VI մասը (Արբիտրաժը) Պայմանավորվող երկրի իրավասու մարմին ներկայացված գործի մասով նախքան Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ավելի ուշ ամսաթիվը միայն այնքանով, որքանով երկու Պայմանավորվող երկրների իրավասու մարմինները համաձայնում են, որ այն կկիրառվի այդ կոնկրետ գործով:

3. 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 5-րդ կետի համաձայն՝ 2-րդ հոդվածի (Եզրույթների մեկնաբանությունը) 1-ին կետի «ա» ենթակետի ii պարբերության մեջ նշված համաձայնագրերի ցանկի ընդլայնման արդյունքում նոր Կարգավորող հարկային համաձայնագրի դեպքում սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի՝ «Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ավելի ուշ ամսաթիվը» շարադրանքը պետք է փոխարինվի «համաձայնագրերի ցանկի ընդլայնման վերաբերյալ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրը» շարադրանքով:

4. 28-րդ հոդվածի (Վերապահումները) 9-րդ կետին համապատասխան՝ 26-րդ հոդվածի (Համատեղելիությունը) 4-րդ կետով նախատեսված վերապահումը հետ վերցնելը կամ փոխարինելը, կամ 28-րդ հոդվածի (Վերապահումները) 2-րդ կետին համապատասխան՝ վերապահման վերաբերյալ առարկությունը հետ վերցնելը, ինչի արդյունքում Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող երկու Պայմանավորվող երկրների միջեւ կիրառվում է VI մասը (Արբիտրաժը), ուժի մեջ է մտնում սույն հոդվածի 1-ին կետի «ա» եւ «բ» ենթակետերին համապատասխան՝ բացառությամբ, երբ «Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ավելի ուշ ամսաթիվը» շարադրանքին արված հղումները փոխարինվում են համապատասխանաբար «վերապահումը հետ վերցնելու վերաբերյալ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրը», «վերապահումը փոխարինելու վերաբերյալ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրը» կամ «վերապահման մասով արված առարկությունը հանելու մասին ծանուցման վերաբերյալ Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրը» շարադրանքին արված հղումներով:

5. 29-րդ հոդվածի (Ծանուցումները) 1-ին կետի «ժզ» ենթակետի համաձայն կատարված լրացուցիչ ծանուցումն ուժի մեջ է մտնում 1-ին կետի «ա» եւ «բ»

ենթակետերին համապատասխան՝ բացառությամբ, երբ սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի՝ «Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող Պայմանավորվող երկրներից յուրաքանչյուրի համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելու ամենաուշ ամսաթվին» շարադրանքին արված հղումները փոխարինվում են «լրացուցիչ ծանուցման մասին Ավանդապահի կողմից հաղորդում ներկայացվելու օրը» շարադրանքին արված հղումներով:

Հոդված 37. Կոնվենցիայից դուրս գալը

1. Ցանկացած Կողմ կարող է ցանկացած պահի դուրս գալ սույն կոնվենցիայից՝ Ավանդապահին ծանուցում ներկայացնելով:

2. 1-ին կետին համապատասխան Կոնվենցիայից դուրս գալն ուժի մեջ է մտնում ծանուցումն Ավանդապահի կողմից ստանալու օրվանից: Այն դեպքում, երբ Կարգավորող հարկային համաձայնագրի կողմ հանդիսացող բոլոր Պայմանավորվող երկրների համար սույն կոնվենցիան ուժի մեջ է մտել Կողմի՝ սույն կոնվենցիայից դուրս գալն ուժի մեջ մտնելուց առաջ, այդ Կարգավորող հարկային համաձայնագիրը մնում է սույն կոնվենցիայով փոփոխված տեսքով:

Հոդված 38. Արձանագրությունները

1. Սույն կոնվենցիան կարող է լրացվել մեկ կամ ավելի արձանագրություններով:

2. Արձանագրության կողմ դառնալու համար Պետությունը կամ երկիրը պետք է լինի նաեւ սույն կոնվենցիայի Կողմ:

3. Սույն կոնվենցիայի Կողմն արձանագրությամբ պարտավորված չի համարվում, եթե արձանագրության կողմ չի դառնում դրա դրույթներին համապատասխան:

Հոդված 39. Ավանդապահը

1. Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության Գլխավոր քարտուղարը սույն կոնվենցիայի եւ 38-րդ հոդվածում (Արձանագրությունները) նշված ցանկացած արձանագրության Ավանդապահն է:

2. Ավանդապահը Կողմերին եւ Ստորագրող կողմերին մեկ օրացուցային ամսվա ընթացքում ծանուցում է՝

- ա) 27-րդ հոդվածին (Ստորագրումը եւ վավերացումը, ընդունումը կամ հաստատումը) համապատասխան՝ ցանկացած ստորագրման մասին.
- բ) 27-րդ հոդվածին (Ստորագրումը եւ վավերացումը, ընդունումը կամ հաստատումը) համապատասխան՝ վավերացման, ընդունման կամ հաստատման մասին ցանկացած փաստաթուղթ ի պահ հանձնելու մասին.
- գ) 28-րդ հոդվածին (Վերապահումները) համապատասխան՝ ցանկացած վերապահման կամ այն հետ վերցնելու կամ փոխարինելու մասին.
- դ) 29-րդ հոդվածին (Ծանուցումները) համապատասխան՝ ցանկացած ծանուցման կամ լրացուցիչ ծանուցման մասին.
- ե) 33-րդ հոդվածին (Փոփոխությունը) համապատասխան՝ սույն կոնվենցիայում փոփոխություն անելու ցանկացած առաջարկության մասին.
- զ) 37-րդ հոդվածին (Կոնվենցիայից դուրս գալը) համապատասխան՝ սույն կոնվենցիայից դուրս գալու ցանկացած դեպքի մասին, եւ
- է) սույն կոնվենցիային առնչվող ցանկացած հաղորդման մասին:

3. Ավանդապահը պահպանում է հանրությանը հասանելի հետեւյալ փաստաթղթերի ցանկերը.

- ա) Կարգավորող հարկային համաձայնագրերը.
- բ) Կողմերի վերապահումները, եւ
- գ) Կողմերի ծանուցումները:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, պատշաճ կերպով լիազորված լինելով, ստորագրեցին սույն կոնվենցիան:

Կատարված է Փարիզում 2016 թվականի նոյեմբերի 24-ին, մեկ՝ անգլերեն եւ ֆրանսերեն հավասարազոր օրինակից, որը պահվում է Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության արխիվում:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2016 թվականի նոյեմբերի 24-ին ստորագրված «Հարկման բազայի խեղաթյուրումը և շահույթների տեղափոխումը կանխելու նպատակով հարկային պայմանագրերին առնչվող միջոցառումների իրականացման վերաբերյալ» բազմակողմ կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**